

Հայկական Տասնհինգը Եւ Թուրք Գերմանական Դաճնագիրը

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

1.

Բաւական մեկան հոսեցուց Հայկական Տասնհինգը, մանաւանդ վերջին քանի մը տարիներու ընթացքին, հայրենիքի եւ արտասահմանի մէջ, եւ քանի մը իսկապէս գնահատելի աշխատասիրութիւններ եկան լոյսին՝ արտահանելու համար արդէ պատմութեան առաջին ցեղասպանութեան ետին գտնուող ցեղային, ընկերային, իմացական, կրօնական, քաղաքական, տնտեսական եւ այլ կարգի ուժեր, որոնց առկայութիւնը անկասկած որ շատ բան կը պատմէ Հայկական Եղեռնի ներքին ծալքերուն մասին: Սակայն, քիչ եղաւ թիւը անոնց, որոնք հետուէն կամ մօտէն աղերս մը տեսնելու զեցին գերման եւ թուրք զինուորական յարաբերութիւններուն եւ Հայկական Տասնհինգին միջեւ: Այդ քիչերուն մէջ անկասկած առաջին տեղը կը գրաւեն Ե. Ղ. Սարգսեանը, Ջ. Ս. Կիրակոսեանը եւ Հայկազն Գ. Ղազարեանը արեւմտահայութեան օրհասին եւ Մեծ Եղեռնին նուիրուած իրենց ուսումնասիրութիւններով, ու եթէ անոնց գործերուն բոլորն ալ չեղան նոյն աստիճանի եւ մակարդակի վրայ կեցող՝ առնուազն եղան, սակայն, Օսմանեան Կայսրութիւնը կազմող ամբողջն եւ անոր ամբոխային ալ հոգեբանութենէն վեր եւ առաջ՝ զայն, այդ կայսրութիւնը, ղեկավարող եւ քաղաքականէն ու տնտեսականէն տարբեր անոր զինուորական փոխարարբերութիւնները տեսնող, փոխարարբերութիւններ, որոնք երբ վերածուեցան դաշնագիր ու համաձայնագրի եւ գրուեցան սեւով ձերմակի վրայ՝ ար-

դէն իսկ ունէին սերմերը հետագայ Հայկական Տասնհինգը յառաջացնող մտայնութեան մը:

Հոս մեր նպատակը չէ քննարկումի ենթարկել վերջին քանի մը տարիներու ընթացքին լոյսին եկած յուշագրական եւ պատմագրական գործերը, ոչ ալ բաղդատականի տալ Սարգսեանի, Կիրակոսեանի եւ Ղազարեանի մենագրութիւններն ու աշխատասիրութիւնները: Ընդհակառակը, մերը պիտի ըլլայ տալ քանի մը վաւերագիրներ, որոնցմէ սմանք գոյութիւն ունին անոնց գործերուն մէջ, սրբագրել կատարուած թարգմանութիւնները այդ վաւերագիրներուն, վերլուծել զանոնք, մանաւանդ Հայկական Տասնհինգին համար նախապատրաստութիւն ծառայող կարգ մը յօդուածներն անոնց, եւ այդ ձեւով արտահանել ինչ որ կայ թաքուն անոնց տողերուն ետին:

1912-1913 թթ. երկարող Պալքանեան Պատերազմին յաջորդող ժամանակաշրջանը Օսմ. Կայսրութեան սահմաններուն մէջ անցուցած որեւէ մէկուն համար, այսօր, գաղտնիք մը չէ ներկայութիւնը զօրաւոր գերման ազդեցութեան մը, որ իր սկիզբն առնելէ ետք քայքայելի աշխարհէն՝ իր ոլորտներն առլցեց Միքսիլերուփայի եւ Տրանկնիսի Օսթէնի քաղաքական, տնտեսական եւ ապա ղինոտորական ծրագիրներով: Հոս մեր հետաքրքրութենէն դուրս կ'իյնան այդ ծրագիրները, որոնց մէջ, սակայն, պէտք է որոնել առաջին սերմերը Հայկական Տասնհինգին: Որքան որ ալ այս հաստատումը թուի ոչիրաւ՝ ճշմարտութիւնը, սակայն, կ'ըսէ այլ բան, որովհետեւ այդ ծրագիրներուն մշակումի ճամբուն վրայ էր, որ գերման միտքը դէմ յանդիման եկաւ Հայութեան հետ, զոր կամ պէտք էր որ խորտակէր անիւններուն ներքեւ Պերլինէն դէպի Պաղտաս եւ անկէ դէպի Պարսից Մոց սուրալիք իր շոգեկառքերուն եւ կամ ալ փոխադրէր զայն այլ տեղ: Տասնհինգի հայ սերունդին համար գաղտնիք եղող այս ճշմարտութիւնը եթէ տրուած ըլլար անոր՝ որեւէ բան պիտի կարենա՞ր փոխել տուեալ հարցի ընթացքէն՝ անկարելի է դիտնալ այսօր, եւ, սակայն, անոր կապուած մնացող Հայութեան ճակատագիրը դուցէ ստանար քչիկ մը տարբեր ընթացք՝ եթէ Հայերէն ոմանք կարենային արթննալ ատենին դարերու հնութիւն ունեցող իրենց յուզական թմբիւրէն կամ նորօրեայ իրենց վիպապաշտութենէն եւ աւնուազն նմարել ճշմարտութիւնները եւ միայն այդ ձեւով իջնել հրապարակ քաղաքականութիւն խաղալու համար, որովհետեւ սլահպանումին համար ժողովուրդին եւ հայրենիքին՝ անհրաժեշտ էր ձեռք տալ նոյնիսկ սատանային: Բայց չեղաւ այդպէս, եւ հասնող Համաշխարհային Առաջին Պատերազմին ստեղծած թոհուրտիւն մէջ ամէն մարդ կորսնցուց դէպքերն ու շարժումները իրարու զօղե-

լով անոնցմէ եղբակացութիւններու հանգելու ամէն կարելիութիւն ու դարձաւ միայն յորձանապտոյտի ինկած իմացականութիւն: Անկէ ետք, պատերազմին յաջորդող տարիներն եղան յղի տարօրինակ կերպով անհամատեղելի իրադրումներով, որոնց մէջ հայը փարեցաւ իր կծկուող ներաշխարհին եւ հոն ստեղծեց յուզական մտայնութիւն մը լոկ, դէպքերը դատելու իւրօրինակ ձեւ մը, ողբերգականութիւն մը, որոնց վիպապաշտութիւնը տակաւին կը շարունակուի ու կը տիրապետէ հայու մեր առօրեային վրայ:

Հոգեբանական այս դրութեան, այս իրավիճակին դէմ ղետեղել իրաւութիւնը, բրտութիւնը, անուրանալիութիւնը թուրք եւ գերման մա'նաւանդ զինուորական յարաբերութիւններուն՝ անշուշտ որ ոմանց համար պիտի մնայ անընդունելի: Միմիայն ընդունիլ, թէ թուրանականութիւնը, թուրք ազգայնամոլութիւնը, հակառուս, հակաֆրանսական եւ հականգլիական դիրքորոշումներով կատարած արեւելումը Օսմանեան Կայսրութեան եւ այդ արեւելումին վերլուծումը բաւական են արտահանելու համար ամէն ինչ՝ կանխակալօրէն սահմանափակել է շրջանակը որոնումին, որ, սակայն, երբեք ալ պէտք չէ որ թեւատուի, նեղնայ եւ դառնայ փոքրացումի կարելիութիւններուն: Այս բոլորին մէջ չտեսնել զինուորականէն տարբեր հիմնատախտակ, մանաւանդ թուրքին լեզուցը կտցահարող սարսափելի անգղը թուրանականութեան՝ թիւրատեսութեան լաւագոյն եւ անհերքելի վկայականն է այսօր, որովհետեւ ամէն տուեալ կայ հաւատարու եւ պնդելու, թէ Հայկական Տասնհինգը ունէր նկարագրի ամէն գիծ, ազգային, տնտեսական, ընկերային, կրօնական որակումներով ամէն չափ ու կշիռ, որոնց վրայ անպայման կերպով պէտք էր որ աւելնար նաեւ հզօր ազդեցութիւնը Օսմանեան Պետութեան եւ Գերմանական Կայսրութեան միջեւ ստորագրուած զինուորական համաձայնութեան ալ, որ չէր կրնար որեւէ աղերս չունենալ հայ ժողովուրդին ըլլալու եւ չըլլալու ճակատագրական հարցին հետ:

Արդէն ճիշդ հոս ալ կը գտնուի սխալը մատչումին, որովհետեւ Հայկական Տասնհինգը սարքող երիտասարդ-թուրք ղեկավարութիւնը շատ լաւ գիտէր, թէ ի՞նչ կ'ընէր 2 Օգոստոսի 1914-ի թուրք-գերմանական զինուորական դաշնագիրն ստորագրելով, որովհետեւ այդ ձեւով, հինէն, շատ հինէն սկսուած սրտակցութիւն մըն էր որ կ'առնէր մարմին, կը խոստանար թեւ ու թիկունք կանգնիլ թուրանական իր ծրագիրներուն կատարումին, լռելեայն կը համաձայնէր վերացումին Հայկական Հարցին՝ հայութեան իսկ վերացումով, եւ, անհրաժեշտութեան պարագային, զէն ու զբահով պաշտպանել աշխարհը սուլթաններուն ու պարտադրել անոր վերջ-

նական կամքը, անոր սահմաններուն մէջ քաղաքական թնճուկ ստեղծող ժողովուրդներուն վրայ:

2.

Թուրք-գերմանական յարաբերութիւնները պատմութիւն արձանադրած իրականութիւններ են այսօր: Անոնք կու գան գերման քայլերին պոլսական այցելութենէն շատ առաջ ճամբայ կլած ժամանակէ մը՝ հասնելու համար թուրք-գերմանական զինուորական բարեկամութեան մը դուռներուն: Երկուստեք զրկուած զինուորական, տնտեսական, մշակութային եւ քաղաքական պատուիրակութիւնները արձանադրած էին բարեկամութենէ անդին ինկող կապակցութիւն մը՝ այնքա՛ն որ 1908 թ.ի Օսմանեան Սահմանադրութեան վերահռչակումին անմիջապէս յաջորդող 1909 թ.ի կլիկեան ջարդերը բնաւ ալ դատապարտելի չեղան Պերլինի ղեկավարութեան համար: Ընդհակառակը, դազանաբարոյ այդ արարքին մէջ անիկա, այդ ղեկավարութիւնը, ջանաց դտնել մեծ թիւ մը մեղմացուցիչ պատճառներու, որոնց յենած՝ արդարացուց թրքութիւնն ու անոր ինքնապաշտպանութեան իրաւունքը: Թէ իսկապէս թուրքն ու իր պետութիւնը կարիքն ունէ՞ին պաշտպանուելու անդէն ժողովուրդի մը դէմ, ինչպիսին էր հայութիւնը, երբեք ալ հարց չեղաւ քայլերին եւ անոր շրջանակին համար՝ այնքան ատեն որ թուրք աշխարհին մէջ կար Տրամկ մախ Օսթեմի քաղաքական եւ տնտեսական նպատակներուն ծառայելու պատրաստակամութիւն: Ի՞նչ փոյթ որ այդ ձեւով այդ աշխարհը հետապնդած կ'ըլլար նաեւ դէպի արեւելք ծաւալողական իր նպատակները: Թուրք-գերման սա լուռ այլ բացորոշ սրտակցութիւնը շատ բան կը պարտի ինվերի 1908 թ.էն ետք շրջան մը Պերլինի մէջ որպէս օսմանեան դեսպանատան զինուորական կցորդի բնակութեան, մանաւանդ այն շնորհներուն, ուշադրութեան եւ ձրի բարիքներուն, որոնք տեղացին թուրք նափուլէոն մը ըլլալու ձգտումն ու յաւակնութիւնը սնուցանող ինվերի գլխուն:

Ինվերի Պոլիս վերադարձէն ետք դէպքերու ուղղութիւնը այլ ընթացք առաւ: 1912-1913 թթ. Պալքանեան Պատերազմը ցոյց տուաւ ներքին փտախար թրքական կայսրութեան հետ նաեւ բանակին, որ, հակառակ անպարտելիութեան վարկածով մը իր ճակատը դրասանդած ըլլալու իրաւութեան, չէր կրցած դիմադրել տասը միլիոն հաշուող պալքանեան ժողովուրդներուն, երբ Թուրքինը, ըստ պատմական աղբիւրներու, կը հաշուէր քսաներկու միլիոն: Յստակ էր, թէ տեղ մը ծուռ բան մը կար, եւ այդ տեղը Օսմանեան կայսրու-

Թիւնն էր լուր: Յստակ էր նոյնքան, թէ պիտի պատահէր անխուսափելի փրկումը թրքական աշխարհին, ուր հայն ու արարը սկսած էին գլուխ ցցել յոյնէն եւ մակեդոնացիէն, պուլկարէն եւ սերպէն հտաք: Պէտք էր առաջըր առնել այդ փրկումին, պէտք էր փրկել վարկն ու պատիւը թուրքի պատմութեան, պէտք էր վերականգնել երէկի հզօրութիւնը սուլթաններու աշխարհին. ահա թէ ինչո՛ւ համար Մահմուտ Շեքէթ փաշա թրքական բանակն ամբողջութեամբ յանձնեց դերման զինուորական յանձնախումբի մը խնամքին եւ հեռացաւ իր պաշտօնէն:

Մահմուտ Շեքէթ փաշայէն մինչեւ էնվեր հասնող ժամանակի ընթացքին ո՛չ մէկ բան փոխուեցաւ թուրք եւ դերման այս դործակցութեան նկարագրերին մէջ: Իւրաքանչիւր թուրք, որ բազմեցաւ Մահմուտ Շեքէթի աթոռին վրայ, շարունակեց քալել կօշիկներովն իր նախորդին, մինչեւ որ օր մըն ալ էնվեր ինքզինք նետեց այդ աթոռին վրայ: Ա՛լ անկէ հտք նոյնը չեղաւ զինուորական նկարագրը Օսմանեան Կայսրութեան: Պոլիսը եւ Պերլինը կամաւոր կերպով իրարու հետ չիոթող դերման բանակայիններու հսկայ խումբ մը տարածուեցաւ ամէն կողմ եւ Պրոնզարթի հրամանատարութեան ներքեւ երիտասարդ-թուրքերու Օսմանեան Կայսրութիւնը զգեցաւ եղեւոյթը իր տարեկան տօնավաճառին պատրաստուող պաւարական ագարակի մը:

Բայց այս բոլորին դէմ հանդիման դտնուող Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան վերին մարմինին մէջ կը պակսէին նոյնութիւնն ու համամանութիւնը նպատակին եւ այդ նպատակը իրավործելու կարելիութիւններուն: Մեծ պետութիւններու, անոնց վարած քաղաքականութեան եւ անոնցմէ սպասուելիք բարիքներուն հանդէպ թուրքին ունեցած արեւելումը արձանագրեց մէկէ աւելի տատանումներ: Ճեմալ վարակուած էր Փրանսասիրութեամբ, Սայիտ Հալիմ՝ անգլիասիրութեամբ. էնվեր եւ Թալէաթ դերմանաւորներ էին չափազանցուող մոլեռանդութեամբ. Շէյխ իւլ Իսլամ Ֆեհմին տուրք կու տար միջնադարեան խաւարամտութեան, իսկ ուրիշներ՝ Թուրանիայի մը արիւնոտ երազին: Չանազան ախորժակներ ցուցահանող այս հոսանքները, որովհետեւ այս մարդերէն իւրաքանչիւրն ունէր հետեւորդներու իր շարանը, անշուշտ որ ունեցան իրենց ոչ-զանցառելի ազդեցութիւնը վաղուան մը հաշուոյն կատարուող ծրագրիներու, եռեւեփող հոգեբանութիւններու, սնանկութեան դուռերը թակող մտայնութիւններու, եւ քանդումներով ստեղծուելիք Թուրանիայի մը գիտակցութեան արեւելումին մէջ, եւ այդ բոլորը՝ այդքան՝ զօրաւոր կերպով, որ երբ թեւակոխեց

Պուլիս 1914 թ.ին՝ նաեւ անստուգութիւնը թեւակոխեց սահմաններէն ներս Օսմանեան Կայսրութեան, որուն դէմ դուրս եցած կը մնար քաղաքական սուր տառնալ ստեղծած Հայկական բարենորոգումներու հարցը, զոր լուծելու միակ միջոցը կը կայանար վերացումին մէջ ո՛չ միայն այդ հարցին՝ այլ առաւելարար այդ հարցը մարմնացնող Հայութեան, եւ որուն պիտի կարենային օժանդակել զերման ուժը, զերման ղինուորականութիւնը եւ անոնց ընձեռելիք ինքնավստահութիւնը օսմանեան աշխարհին:

Տիրող այս խաժամուժին ուսումնասիրութիւնը դուրս է հիմա մեր հետաքրքրութեան սահմանէն, բայց կարեւոր է վերբերումն անոր՝ Հայ պատմութեան լուսարանումին ի խնդիր, որովհետեւ այդ խաժամուժին յառաջացուցած չարիքներուն մեծազոյնն եղաւ Հայութեան ճակատադրուած: Երբ ձեմալ ձեռնուռայն վերադարձաւ Փարիզի մէջ վարած թուրք-Ֆրանսական իր բանակցութիւններէն՝ դուցէ ո՛չ մէկը զգաց թէ ի՞նչ անդրադարձ էր բերած անոր վատ տրամադրութիւնը թուրքին հակահայ զգացումներուն վրայ: Աւելցուցէք այս մէկուն վրան միւսն ալ՝ հետագային Անգլիոյ մերժումը իր նաւաշինարաններէն ներս թուրքին յանձնարարած զբահաւորներուն թուրքիոյ յանձնումին՝ եւ դուք կ'ունենաք թուրք զգացումին վատէն վատթարին եւ վատթարէն վատթարագոյնին հասնող իրաւութիւնը, այդքա՛ն որ Յուլիսի 20-ին, ձեմալի Ֆրանսայէն վերադարձի օրն իսկ, կէս-դահլիճային ժողովը, որուն կը մասնակցէին վարչապետ եւ արտաքին գործերու նախարար Սայիտ Հալիմ, ներքին գործերու նախարար Թալէաթ, ղինուորական նախարար Էնվեր եւ ծովային նախարար ձեմալ, չտատամսեցաւ իր քուէն նետելու ի շահ աւստրո-զերմանական խմբակցութեան եւ այդ ձեւով դուրս դալու ստեղծուած ոչ-բաղձալի կացութենէն՝ կարենալ պահպանելու համար ամբողջականութիւնը կայսրութեան եւ յարատեւումը սուլթանի յաջորդներուն աշխարհին:

Հայկական Տասնհինգի ուսումնասիրումին ձգտող որեւէ փորձ պէտք է մտահան ընէ երկու իրողութիւն. առաջին՝ Սայիտ Հալիմը, որ յաճախ կը յիշուի միայն որպէս վարչապետ՝ մոռացութեան տալով արտաքին գործերու նախարարի անոր հանգամանքը, որ մեծ կշիռ կու տայ թուրք եւ զերման յարաբերութիւններուն, եւ երկրորդ՝ Յուլիսի 20-ի ժողովը, որ զուգադիպութիւն մը չէ բնաւ: Հետագայ ուսումնասիրութիւնները զուցէ շատ բան ըսեն այս զոյգ մը իրողութիւններու մասին եւ ցոյց տան անոնց անուրանալի ազդեցութիւնը Հայութեան մատուցուած ճակատագրի ուղղութեան եւ ձեւին մէջ, մանաւանդ որ նոյն այդ գիշերն իսկ, Յուլիսի 20-ին, ինչպէս իր թիւ 354 եւ Յուլիսի 21 թուակիր հեռագիրով Վանկեն-

հայմ կը հաղորդէր գերման արտաքին դործերու նախարարութեան, «Մեծ Վեզիրը, Թալէաթ պէյը եւ էնպէրը՝ բոլորը միասին հաղորդեցին աւստրիացի իմ պաշտօնակիցիս, թէ ներկայիս Աւստրիա հասած էր վերջին վայրկեանին, երբ կրնար վերաշահել այն վնասները, զորոնք կրեց Պալքանեան Պատերազմի ընթացքին եւ որպէս մեծ պետութիւն վերահաստատել իր վարկը յաշս պալքանեան տէրութիւններուն եւ Թուրքիոյ: Ո՛չ միայն Պուլկարիա, այլ նաեւ Ռուսիա եւ Թուրքիա, առանց պայմանի պիտի կողմնորոշուէին դէպի Երբեակ Միութիւնը՝ եթէ Աւստրիա լաւ դաս մը տար Սերպիոյ» (1):

Թուրք-աւստրիական խօսակցութիւնները նոր չէին սակայն: Յուլիսի 14 թուակիր հեռագիր մը՝ Յուլիսի 17-ին կը յայտնէր Վանկենհայմին, թէ Վիեննա հետաքրքրուած էր Թուրքերուն մէջ զինակից մը դռնելու կարելիութեամբ: Թէ որքան եւ ինչպիսի շահ մըն էր այդ զինակցութիւնը՝ Եակով, գերման պետական քարտուղարը, կ'եզրակացնէր իր հեռագիրով, թէ «հետադայ քանի մը տարիներուն համար Թուրքիան կրնար նկատուիլ միմիայն կրաւորական ուժ մը՝ իր տկար բանակին պատճառով եւ բոլորովին անկարող՝ Ռուսիոյ դէմ յարձակողական դործողութեան մը համար: ... Ամէն պարագայի, մենք չենք կրնար երաշխաւորել իր բացարձակ պաշտպանութիւնը, օրինակի համար, Հայաստանի վրայ Ռուսիոյ յարձակումի մը դէմ» (2), կարծիք մը, որուն համամիտ էր նաեւ Վանկենհայմ, որ Յուլիսի 18-ին, կը գրէր իր 349 դաղտնի հեռագիրով, թէ ինք թրքական զինակցութեան մը գաղափարին իսկ հակառակ էր, որովհետեւ «այսօր Թուրքիան, առանց այլեւայլի, տակաւին անարժէք զինակից մըն է: ... Բայց սկսելու համար, Թուրքիան կրնայ միայն թելադրուիլ, որ հեռու մնայ քաղաքական ամէն արկածախնդրութենէ եւ բարեկամական յարաբերութիւններ պահէ բոլոր տէրութիւններուն հետ ալ: Նոյնիսկ չէզոք Թուրքիա մը ռուսական քանի մը զօրագունդ պիտի զբաղեցնէ հայկական սահմանին վրայ» (3):

Յուլիսի 23-ին Վանկենհայմ կրկին կը խօսէր իր եւ Բալլավիշինիի, աւստրիացի իր պաշտօնակիցին, մէկ զրոյցին մասին, որուն համաձայն Սայիտ Հալիմ հաղորդած էր, թէ պատերազմի մը պարագային Աւստրիա կրնար հաշուել Թուրքիոյ վրայ այնպէս ինչպէս Պուլկարիոյ. ապա գերման դեսպանը կ'աւելցնէր, թէ «վերջապէս, Մեծ Վեզիրը կրկնեց ինծի երէկ էնպէր փաշայի կողմէ արտայայտուած փափաքը, թէ Թուրքիա պաշտօնապէս արտօնուէր Երբեակ Միութենէն ներս մտնելու: Իշխան Բալլավիշինի, որ մինչ այդ խօսած էր ինծի (այդ) հարցին շուրջ, ըսաւ թէ Թուրքիոյ հետ դա-

չինք մը առ այժմ մեծ բռն մը կը դնէր Երրեակ Միութեան վրայ: Երրեակ Միութիւնը չէր կրնար Թուրքիան պաշտպանել բոլորին դէմ: Մեծ Վեզիրը պատասխանեց թէ Թուրքիան Երրեակ Միութեանէն պաշտպանութիւն կ'ուզէր միայն Ռուսիոյ դէմ եւ ո՛չ թէ Ֆրանսայի եւ Անգլիոյ» (4):

Յաջորդ օրը, Յուլիսի 24-ին, իր թիւ 128 հեռագիրով կայսերական նախարար Վետեկ կը յայտնէր Յակովին, թէ Ուկրաինա Երկրորդ համաձայն էր օգտագործելու Թուրքիոյ յարուած Երրեակ Միութեան, եւ եթէ Պոլիս անպայման կը փափաքէր դաշնագիր մը՝ պէտք էր որ ստորագրուէր անիկա (5): Իսկ Յակով իր վեհապետէն իրեն տրուած հրահանգին համաձայն, իր թիւ 268 հեռագիրով կը հաղորդէր Վանկենհայմին, թէ անիկա «պէտք է որ այս ուղղութեամբ աշխատանք տանի Կոստանդնուպոլսոյ մէջ: Այս առնչութեամբ աւելցնեմ, թէ առայժմ կնքուելիքը առ հոկ դաշնագիր մըն է, թէ, բնականօրէն, ինչպէս կը յայտնէ Ձերդ Վսեմութիւնն ալ, այժմ չենք կրնար որեւէ նկատառելի պատասխանատուութեան տակ մտնել» (6):

Անգամ մը որ գերման վարիչները որոշեցին ընդառաջել Պոլսոյ երկտասարդ-թուրք ղեկավարներուն՝ դործի անցաւ Վանկենհայմ. տեսակցութիւն եւ բանակցութիւն յաջորդեցին իրարու, եւ, Յուլիսի 27-ին, իր թիւ 362 հեռագիրով գերման ղեսպանը հաղորդեց անոնց արդիւնքը Պերլինի իր տէրերուն: Ըստ Վանկենհայմի՝ «էնպէր փաշա ըսաւ ինծի, թէ յայտնած էի Մեծ Վեզիրին, թէ Թուրքիան ինքզինքին պէտք չէր որ քոյլ տար որեւէ ձեռքի համաձայնութիւն նախքան իր զինուորական եւ վարչական վերակազմութիւնը: Իրականութեան մէջ՝ իմ տեսակէտս ամբողջութեամբ ճիշդ էր: Գործնականին մէջ, սակայն, Թուրքիա պիտի մատնուէր դժուարութեան՝ իր բարենորոգումները խաղաղ եւ լրիւ կերպով իրագործելու մէջ, եթէ պաշտպանուած չըլլար արտաքին դժուարութիւններու դէմ: Այս իսկ պատճառով պէտք ունէր աջակցութեանը մեծ պետութիւններու խմբակցութիւններէն մէկուն: Կեդրոնական Մարմինէն փոքրիկ մաս մը կ'ուզէր Ֆրանսայի եւ Անգլիոյ հետ համաձայնիլ, որովհետեւ այս տեսակ համաձայնութիւն մը Թուրքիան պիտի ապահովէր այնքան ատեն որքան որ Երրեակ Միութեան պետութիւնները տկար էին Միջերկրականի մէջ. միւս կողմէն՝ Կեդրոնական Մարմինին մեծամասնութիւնը, ներառեալ Մեծ Վեզիրը եւ Թալէաթը, Սալիբը եւ ինք՝ անոնց գլուխը, չէր փափաքեր Ռուսիոյ արքայազնները ըլլալ, եւ համոզուած էր, որ Երրեակ Միութիւնը զինուորականօրէն աւելի զօրաւոր էր քան թէ Երրեակ Համաձայնութիւնը, եւ համաշխարհային պատերազմի մը պարագային

պիտի յաղթական դուրս դար: Ուստի կրնար յայտարարել, թէ ներկայ թրքական կառավարութիւնը ջերմօրէն կը փափաքէր ինքզինք կապել Երրեակ Միութեան, եւ ծանր սիրտով պիտի որոշէր Երրեակ Համաձայնութեան հետ կնքուելիք դաշինք մը՝ եթէ մերժուէր մեր կողմէ: Արդ, դահլիճը շատ լաւ կ'ըմբռնէր, թէ մեծ տէրութիւններու հետ բաղդատած, Թուրքիան անարժէք էր որպէս դաշնակից, հետեւաբար միայն կ'ուզէր պաշտպանութիւնը յիշեալ մեծ տէրութիւններու խմբակցութեան այն դաշնազիրին համար, զոր ինք պիտի ստորագրէր աւելի փոքր պետութիւններէն որեւէ մէկուն հետ: Ներկայիս, Թուրքիոյ համար երկրորդական զինակցութիւններու երկու կարելիութիւններ կային — զինակցութիւն մը Յունաստանի հետ, որ պիտի յակէր դէպի Երրեակ Համաձայնութիւն, եւ զինակցութիւն մը Պուլկարիոյ հետ, որ պիտի առաջնորդէր դէպի Երրեակ Միութիւն: Դահլիճը կ'ուզէր, որ զինակցութիւնն ըլլար Երրեակ Միութեան պաշտպանութեան մերձիւ, կամ, առնուազն, Երրեակ Միութեան մաս կազմող տէրութիւններէն մէկուն: Զինակցութիւն մը Պուլկարիոյ հետ նախապէս արդէն յստակ կերպով որոշուած էր իր բոլոր մանրամասնութիւններով, եւ չէր ստորագրուած այն պարզ պատճառով, որ Պուլկարիա չէր կրնար քաջութիւնը ունենալ այդ բանն ընելու առանց Երրեակ Միութեան պաշտպանութեան: Բայց հիմա որպէս արդինք աւստրո-սերպիական լարուած դրութեան՝ կացութիւնը դարձած էր ճակատագրական: Զինակցութեան մը համար Մեծ Վեդբըրը բանակցութիւններու պիտի սկսէր Վենիզելոսի հետ: Իրեն համար զիւրին պիտի ըլլար մերժել յունական առաջարկը՝ եթէ Թուրքիոյ եւ Պուլկարիոյ ընձեռուէր Երրեակ Միութեան խմբակցութեան մաս կազմելու կարելիութիւնը՝ այնպէս ինչպէս Ռումանիան Աւստրիոյ հանդէպ: (Բարձրագոյն) Դուռը անկարող էր սպասելու մինչեւ որ պատերազմ մը ծագէր Պալքաններու մէջ: Զինուորական միացեալ պատրաստութիւնները սկսելու էին անմիջապէս:

«Որ պատասխան՝ ըսի ինչերին, թէ... լուրջ էին քաղաքական նկատումները: Որպէս անդամ Երրեակ Միութեան՝ Թուրքիան իր վրան պիտի հրաւիրէր Ռուսիոյ թշնամանքը: Այդ պարագային Թուրքիոյ արեւելեան սահմանները ամենէն տկար կէտը պիտի ըլլային Երրեակ Միութեան զինուորական դրութեան մէջ, ինչպէս նաեւ (պիտի ըլլային) Ռուսիոյ (համար) յարձակումի բնական թիրախ: Երրեակ Միութեան կառավարութիւնները գուցէ մերժէին իրենք զիրենք բեռնաւորել պատասխանատուութիւններով, որոնց դէմ այսօր Թուրքիան կարող էր ոչ մէկ գոհացուցիչ փոխադարձութիւն ընելու...»:

«Էնվեր փաշա մեծ ուշադրութեամբ լսեց զիս, բայց կրկին ու կրկին պնդեց, որ եթէ Երրեակ Միութիւնը արդիւնէր թուրք-պուլ-կարական զինակցութիւն մը՝ Կեդրոնական Մարմինի Երրեակ Համաձայնութեան բարեկամները պիտի գերակայութիւն ձեռք ձր-դէին...» (7) :

Գրեթէ ամբողջութեամբ մէջբերուեցաւ Էնվեր-Վանկենհայմ տեսակցութիւնը: Գաղտնիք չկայ անոր մէջ: Էնվեր կ'ուզէր, որ Օսմանի աշխարհը կապուած մնար գերմանական աշխարհին, վստահ՝ որ այդ ձեւով ինքնաբերաբար դէմ յանդիման կու դար ուստական աշխարհին հետ եւ պատերազմին ստեղծած թոհուրոհէն օգտուելով՝ յառաջ կը մղէր թուրքական իրադրոժումն իր երազներուն: Վաւերադիրը, սակայն, պէտք է կարդալ տողերուն ընդմէջէն՝ երեւան հանելու համար զիրքը Վանկենհայմին: Գերման դեսպանն արդէն իսկ որոշած էր իր ընթացքը, որ բնաւ ալ հակառակ չէր ընթանար Էնվերի տեսութիւններուն՝ ճիշդ այնպէս ինչպէս որ էր գծուած ընթացքը Պերլինին: Ահա թէ ինչո՞ւ համար նոյն օրն իսկ անիկա տեսակցեցաւ Լիման Փոն Սանտրըղի հետ քննելու համար իրական մետաղը օսմանեան բանակներուն: Արդիւնքն եղաւ իր թիւ 371 դաղտնի հեռագիրը, որով կը յայտարարէր գերման արտաքին դործերու նախարարութեան, թէ անհրաժեշտ էր ձեռքի տակ պահել պուլկարներն ու երիտասարդ-թուրքերը այնքան ատեն որքան որ սերպ-աւստրիական բախումը կը ներկայացնէր տեղական բնոյթ, իսկ «եթէ թրքական բանակը դործնապէս ղեկավարուէր գերման զինուորականներու կողմէ՝ անոր զինական արժէքը պիտի եռապատուէր: Զօրավար Լիման ըսաւ ինծի», կ'աւելցնէր ապա, «թէ իր դիրքը կը զօրացնէր որպէս (զինուորակառ) ղեկավարը թրքական հինգերորդ զօրաբանակին, որ որեւէ պարագայի անմիջապէս դաշտ պիտի նետուէր (գործազուր-իւններու համար)...: Բանակին գերման ղեկավարութիւնը պիտի ընձեռէր անդնահատելի այն առաւելութիւնը, որ պատերազմի պարագային (Թուրքիա) ստիպուած պիտի կատարէր իր խոստացած պարտաւորութիւնները» (8) :

Յաջորդ օրը, Յուլիսի 28-ին, Սայիտ Հալիմ իր մօտ հրաւիրեց Վանկենհայմը, անոր յանձնելու համար Սուլթանին կառավարութեան դիմումնագիրը, որ «մօտիկ ապագային Գերմանիա թուրքիոյ հետ պաշտպանողական եւ յարձակողական դաղտնի զինակցութեան մը մտնէր Ռուսիոյ դէմ, եւ այդ ձեւով կարելի դարձնէր թուրքիոյ մուտքը Երրեակ Միութենէն ներս» ապա Վանկենհայմ կը շարունակէր իր այդ թիւ 370 եւ բացարձակ կերպով դաղտնի հեռագիրով, թէ ըստ այդ դիմումնագիրին, «պատերազմական վիճակ պիտի ստեղծուէր երբոր Ռուսիան յարձակէր թուրքիոյ, Գեր-

մանիոյ կամ ալ Աւստրիոյ վրայ, եւ կամ երբոր Գերմանիան կամ Երբեակ Միութիւնը յարձակում գործէր Ռուսիոյ վրայ: Բացի Ռուսիայէն՝ Թուրքիա ո՛չ մէկ պաշտպանութիւն կը պահանջէ (ք) ալ երկիրներու դէմ: Գալով մնացեալ միջազգային բոլոր հարցերուն, ինչպիսին էին համաձայնութիւններու, պարտքերու եւ այլնի վերաբերողները, ամէն ինչ պիտի մնար այնպէս ինչպէս որ էր: Թրքական պայմանը այն պիտի ըլլար, որ պատերազմի պարագային կայսրը (9) Զինուորական Պատուիրակութիւնը (10) ձեռքը Թուրքիոյ մէջ: Միւս կողմէ, Թուրքիան կը խոստանար ձեւ մը գտնել, որուն միջոցով Թրքական բանակին վերին հրամանատարութիւնը եւ բանակին մէկ չորրորդին ճակատային գործնական հրամանատարութիւնը պիտի յանձնուէր Զինուորական Պատուիրակութեան՝ անմիջապէս որ սկսէր պատերազմը:

«Բանակցութիւնները պէտք էր որ կատարուէին ծայրայեղ զաղտնապահութեամբ՝ նոյնիսկ Թրքական նախարարները նկատի առած: Մեծ Վեպիրը կը պահանջէ (ք) ինձմէ առայժմ հարցը յիշել ո՛չ մէկ պաշտօնակիցի, եւ «անհրաժեշտ» կը գտնէ (ք) որ նոյնիսկ Մահմուտ փաշա (11) չիմանա (ք) զաղտնիքը» (12):

Բացարձակ զաղտնապահութեամբ յառաջացող այս բանակցութիւններուն ետին կեցող երիտասարդ-թուրքերը դուրս ձգելու փութկոտութիւնը ի յայտ կը բերէ մէկ ճշմարտութիւն - Թուրք-գերմանական յարաբերութիւններն ու բանակցութիւնները հիմնուած կը մնան քանի մը անձերու կամայականութեանը վրայ, որ իրականութեան մէջ իր ջուրերը կ'ըմպէ միմիայն Երիտասարդ-թուրք Կուսակցութեան Կեդրոնական Մարմինը կազմող անդամներուն մէկ մասէն: Օսմանեան կառավարութիւնը որպէս այդպիսին՝ բացակայ է անոնցմէ, որովհետեւ անկէ շատ աւելի վեր կեցող կայ մարմին մը, որ կազմուած է Կեդրոնական Մարմինի Ընդհանուր քարտուղար Միտհատ Շիւքրիւէն, բժիշկներ՝ Պեհաէտտին Շաքիրէն, Նազըմէն եւ Բուզուլիէն, ղինուորականներ՝ Հիլմիէն, Բըզայէն եւ Քիւլչիք Թալէաթէն, ու երեսփոխաններ՝ Զիա Կօթալիէն եւ Աթըֆ պէյէն: Այս բոլորին մէջ Սայիտ Հալիմ կը մնայ գործակատար մը միայն: Վարչութեան այս կազմն իսկ բաւական է ցոյց տալու Յուլիսի 20-28 տարածուող ժամանակամիջոցին անոր կատարած գործին նկարագիրը, որովհետեւ այդ կազմին կէսը բաղկացած է իրենց արուեստը կեանք փրկելու փոխան կեանք քանդելու ի սպաս դնող բժիշկներէ եւ միւս կէսն ալ՝ ոճրագործներէ եւ մարդասպաններէ, որոնք, սակայն, իրենք զիրենք տրամադրած են բանակին. այլ խօսքով, ինչպէս կը բացատրէ Քարապէքիր, «այս ինը հոգիին չորս սպաններէն զատ երեք բժիշկ ալ ղինուորականութեան մէջ մեծցած

ըլլալով՝ Կեղերոնական Մարմինէն ներս ղինուորական սպայակոյտի մը հոգին կար» (13) : Արդ՝ ղինապաշտ այս նկարագիրը անպայման որ պիտի դառնար իր համանմանին եւ այդ մէկը, այդ համանմանը, քայղերին աշխարհն էր անտարակոյս, որ չմերժեց թուրքը եւ բռնեց իրեն երկարած արիւնոտ թաթն անոր :

Յուլիսի 28-ին, Վանկենհայմի թիւ 370 հեռագիրին պատասխանեց Պեթման Հոլլիկ, Գերման Կայսրութեան վարչապետը, իր թիւ 275 դաղտնի հեռագիրով՝ տալով նաեւ քայղերին համաձայնութիւնը Սայլա Հալիմի կողմէ ներկայացուած առաջարկին : Ըստ այդ հեռագիրի բովանդակութեան՝ հետադայ թուրք-գերման դաշնագիրը կնքուած պիտի ըլլար հետեւեալ կէտերով .

«1. Երկու պետութիւնները կը խոստանան կատարեալ չէզոքութիւն պահել աւստրո-հունդարական եւ սերպիական ներկայ բախումին մէջ :

«2. Այն պարագային երբ Ռուսիա դործնապէս ղինուորական միջամտութիւն կատարէ պատերազմին եւ այդպէսով Գերմանիոյ պարտադրուի Աւստրո-Հունդարիոյ նկատմամբ եղած քառու ֆէտտերիսը՝ քառու ֆէտտերիս մը եւս գոյութիւն պիտի ունենայ թուրքիոյ համար :

«3. Պատերազմի պարագային Գերմանիա Ձինուորական Պատուիրակութիւնը պիտի թողու թուրքիոյ մէջ : Թուրքիա կը խոստանայ ապահովել Ձինուորական Պատուիրակութեան դործոն վերին հրամանատարութիւնը (14) :

«4. Գերմանիա Ռուսիոյ դէմ կ'ապահովէ թուրքիոյ ներկայ հողամասը :

«5. Դաշնագիրը ուժի մէջ պիտի մնայ ներկայ աւստրո-հունդարական եւ սերպիական բախումին՝ ինչպէս նաեւ անկէ ծագելիք որեւէ միջազգային բարդութեան ընթացքին : Եթէ այս բախումին որպէս արդիւնք ոչ մէկ պատերազմ տեղի ունենայ Ռուսիոյ եւ Գերմանիոյ միջեւ՝ դաշնագիրն ինքնարեւաբար կը դադրի» (15) :

Նոյն օրն իսկ, թրքական զօրահանդէսի մը ընթացքին Վանկենհայմ գովարանելէ ետք ճշդութիւնն ու արդարութիւնը թրքական արեւելումին՝ հաղորդեց, թէ քայղերին կառավարութիւնը պատրաստ էր դաշնագիր մը ստորագրելու, իսկ օր մը ետք իր թիւ 382 հեռագիրով կը յայտնէր իր կառավարութեան, թէ ժամանակն էր այլեւս հարցը իմացնելու իր աւստրիացի պաշտօնակիցին, որուն որպէս պատասխան, Յուլիսի 30-ին, իր թիւ 284 հեռագիրով, Ես-

կով կը յայտնէր Պերլինի դրական դերքը տուեալ հարցին հանդէպ՝ պայմանով որ Վանկենհայմ վստահ ըլլար, թէ Մեծ Վեզիրը համաձայն էր առաջարկուած դաշնագիրի բովանդակութեան (16), մինչ նոյն օրն իսկ, իր թիւ 385 հեռագիրով, Վանկենհայմ իմաց կու տար Գերմանիոյ արտաքին գործերու նախարարութեան, թէ «Մեծ Վեզիրը կ'ընդունի կէտ 1-էն մինչեւ 4-ը: Վերապահ է կէտ 5-ի համար՝ որպէս բոլորովին անընդունելի: Նախ անկարելի է ճշդել ժամանակը, երբ պիտի վստահ ըլլանք, թէ Ռուսիոյ եւ Գերմանիոյ միջեւ պատերազմ մը պիտի չծագի որպէս արդիւնք աւստրոսերպիական բախումին: Այսպիսի պատերազմ մը կ'ընայ ծագիլ որպէս յետադարձ ազդեցութիւն աւստրիական յաղթանակի մը՝ նոյնիսկ մէկ կամ երկու տարի ետք: Թուրքիայէն կարելի չէ պահանջել, որ այժմ ինքզինքը կապէ Գերմանիոյ՝ հետազային զտնելու համար, որ պէտք է պաշտպանէ ինքզինք՝ եթէ Ռուսիա փափաքի վրէժ լուծել Թուրքիայէն՝ Երրեակ Միութեան հանդէպ ունեցած բարեկամական իր դիրքորոշումին համար: Պէտք է որ պաշտպանենք Թուրքիան Գերմանիոյ հանդէպ ունեցած իր բարեկամութեան բոլոր հետեւանքներուն դէմ: Եթէ նախապէս Մեծ Վեզիրը խօսած էր Գերմանիոյ հետ գործակցութեան աւելի կարճ տեւողութեան մը մասին՝ պարզօրէն ըսել ուղած էր, որ անիկա պիտի ըլլար տեւական համաձայնութիւն մը, կամ (համաձայնութիւն մը) շատ երկար տեւողութեամբ: Բնական էր, որ երկու պետութիւններն ալ այսպիսի դաշնակցութիւն մը փորձէին կարճ տեւողութեան մը համար: Անիկա կը մտածէր եօթը տարուան ժամանակամիջոցի մը մասին, բայց ոչ մէկ ատեն պիտի փափաքէր, որ ղինակցութիւնը տեւէր զօրավար Լիմանի համաձայնագիրէն կարճ, որ պիտի աւարտէր 1918 թ.ի վերջաւորութեան: Տրամաբանական պիտի ըլլար, եթէ անիկա պնդէր, որ Գերմանիա, որ Լիմանի պատուիրակութեան միջոցով կը փափաքի ղինուորական բարենորոգումներ յառաջացնել (Թուրքիոյ մէջ)՝ յանձնառու ըլլար երաշխաւորել, թէ Լիմանի գործունէութիւնը պիտի չընդմիջուէր ռուսական յարձակումով մը» (17):

Բայց առաջարկուած դաշնագիրին տեւողութեան մասին կարանգիր համաձայնութիւն մը Պոլսոյ եւ Պերլինի միջեւ: Գերման ղեկավարութիւնը արդէն պատրաստ ըլլալ կը թուէր ընդառաջելու Սայիտ Հալիմի առաջարկին, այլապէս Զիմմերման, Յուլիսի 30-ին, Վանկենհայմէն ստացուած հեռագիրի մը լուսանցքին վրայ պիտի չգրէր, թէ կը խորհէր, թէ ճներկայ մտահոգիչ պարագաներու ներքեւ պէտք է որ համաձայնինք դաշնագիրի տեւողութեան շուրջ մինչեւ 1918 թ. երկարաձգուող ժամանակամիջոցի մը վրայ - Լիմանի պատուիրակութեան վերջաւորութիւնը - , բայց այս պարագային

բացարձակ կերպով անհրաժեշտ է, որ Աւստրո-Հունգարիան եւս մաս կազմէ դաշնադիրին՝ որպէս երկրորդ պետութիւն» (18) :

Հակառակ դերման բարձր շրջանակներու այս պատրաստակամութեան եւ հակառակ նաեւ Բարձրագոյն Դուռին եւ Վանկենհայմի արտօրանքին՝ Թուրք-դերմանական համաձայնադիրի մը ստորագրումը կը յետաձգուէր ժամէ ժամ : Սայիտ Հալիմ եւ իր անմիջական շրջանակը կ'օգտագործէին ամէն առիթ փութացնելու համար զայն, եւ իրենց առած քաղաքական ու դիւանադիտական քայլերուն մէջ ցոյց կու տային անխոհեմութեան հասնող դիրքորոշում եւ կարծրութիւն . ահա թէ ինչո՞ւ համար Յուլիսի 31-ի իր թիւ 392 հեռագիրով, Վանկենհայմ կ'իմացնէր իր կառավարութեան արտաքին դործերու նախարարութեան, թէ Յունաստանի կողմէ յեղակարծ կերպով ջնջուած էր Սայիտ Հալիմի եւ Վենիզելոսի տեսակցութիւնը, թէ Պուլտոյ մէջ այս մէկը կը նկատուի Երրեակ Համաձայնութեան կողմէ ձեռք առնուած միջոցառում Թուրքիոյ դէմ, եւ թէ ուսական զօրակոչը մ'է՛ծ ազգեցութիւն էր դործած Բարձրագոյն Դուռին վրայ, եւ կ'աւելցնէր այդ բոլորէն ետք, թէ «եթէ Թուրքիոյ հետ դաշինք մը պիտի կնքենք՝ ճիշդ ժամանակն է (հիմա), այլապէս կրնանք 300,000 թուրք զոնել մեղի դէմ՝ փոխանակ (ամռնց) մեղի հետ (ըլլալուն) : Զօրավար Լիման կը կասկածի, թէ Թուրքիան պիտի (ծածկագիրն անընթեռնելի) ինքզինքը Գերմանիոյ կողքին յայտարարէ...» (19) :

Նոյն օրն իսկ, որպէս պատասխան Վանկենհայմի հեռագիրին, իր թիւ 290 ստիպողական եւ դադտնի հեռագիրով, դերման վարչապետ Պեթման Հոլվեկ կը դէտր, թէ «անմիջապէս իմացուցէք Մեծ Վեզիրին, թէ համաձայն ենք (Բարձրագոյն) Դուռի փափաքին դաշնադիրին՝ տեսողութիւնը երկարաձգելու մինչեւ 1918 թ. եւ պատրաստ ենք զայն ստորագրելու : Թուրք-դերման դաշնադիրին Վիեննան ու Հռոմն ալ ընդգրկելու դադափարը յառաջ կը տանինք, որպէսզի անիկա (Թուրքիան) մաս կազմէ Երրեակ Միութեան :

«Ձերդ Վսեմութիւնն արտօնուած է կարելի եղածին չափ շուտ ստորագրելու, բայց նախ պէտք է ճշդուի, թէ Թուրքիա կրնա՞յ որեւէ արժէք ներկայացնող դործողութեան ձեռնարկել Ռուսիոյ դէմ : Եթէ պիտի չկարենայ, անշուշտ, դաշնադիրը պիտի անարժէք ըլլայ եւ պէտք չէ որ կնքուի» (20) :

Յաջորդ օրը, Օդոստոսի 1-ին, Վիեննա համաձայնեցաւ մասնակցելու որպէս դաշնադիր կողմ, իսկ Պեթման Հոլվեկ իր թիւ 296 հեռագիրով հրահանգեց Վանկենհայմին, որ «այն պարագային, երբ Լիմանը համոզուած է, թէ Թուրքիան նոյնիսկ հիմա, Ռուսիոյ հետ պատերազմի մը ընթացքին, գործօն կերպով պիտի աջակցի

մեզի՝ Ձերդ Վսեմութիւնը արտօնուած է կնքելու երկարաձգելու կարելիութիւնով մինչեւ 1918 թ. տեւող դաշնագիր մը» (21), որուն որպէս պատասխան Օդոստոսի 2-ին եւ իր թիւ 409 հեռագիրով Վանկենհայմ կը յայտնէր Գերման արտաքին գործերու նախարարութեան եւ անոր կը զրկէր թուրք-գերմանական դաշնագիրին պաշտօնական պատճէնը, որ ստորագրուած էր իր եւ Սայիտ Հալիմի կողմէ, երբ նոյն օրն իսկ իր թիւ 406 եւ 407 զոյգ հեռագիրներով անիկա կը հաղորդէր, թէ Օդոստոսի 1-ին, Պոլսոյ գերմանական դեսպանատան մէջ, իր, Լիման Ֆոն Սանալըզի եւ Էնվերի միջեւ տեղի ունեցած ժողովի մը ընթացքին ներկաները Համաձայնած էին, որ անմիջապէս որ թուրք-գերմանական դաշնագիրն ստորագրուէր՝ թուրքերը պաշտպանողական դիրք պիտի գրաւէին Կովկասեան ձախտին վրայ ընդդէմ Ռուսիոյ, իսկ յարձակողական նպատակներով զինուորական կեդրոնացումներ կատարէին Թրակիոյ մէջ Ռուսիոյ եւ դուցէ նաեւ Յունաստանի դէմ (22) :

Ա՛լ իրականութիւն էր թուրք-գերմանական զինուորական դաշնագիրը, որուն դոյութեան կոչուելու գործին մէջ Գերմանիա իրեն հետ բերաւ Աւստրո-Հունգարական Կայսրութիւնը, իսկ Օսմանեան Կայսրութեան Երիտասարդ-Թուրք Կուսակցութիւնը՝ թուրանական իր ծրագիրները : Իրաւ էր, որ երկու կողմերուն ալ ծրագիրները կը տարածուէին դէպի արեւելք . իրաւ էր նոյնպէս, որ երկու կողմերն ալ ունէին իրենց մտահոգութիւնները եւ զինուորական, տնտեսական, ընկերային ու քաղաքական խիզախումները . եւ, սակայն, նոյնքան իրաւ էր տակաւին, որ արեւելքի մէջ տեղ մը իրարու հանդիպող այս երկու կայսերապաշտ զգացողութիւնները, տուեալ պահի պատմական անհրաժեշտութիւն որպէս, եկան իրարու, եւ սկսուած պատերազմի շոյնդ ու աղաղակին մէջ, Օդոստոսի 2-ին, ստորագրեցին թուրք-գերման զինուորական դաշնագիրը, որմէ կախում պիտի ունենար ամբողջական կարելիութիւնը Հայկական Տասնհինգի իրագործումին :

Դաշնագիրի ստորագրութեան առաջին անդրադարձը եղաւ յայտարարութիւնը ընդհանուր զօրակոչի մը Օսմանեան Կայսրութեան սահմաններուն մէջ եւ սպա՝ տենդագին աշխատանքներ յաջորդեցին իրարու :

Օդոստոսի 2-ի թուրք եւ գերման զինուորական դաշնագիրը հրատարակուած է Քաուցքիի (23), Սարգսեանի (24), Ղազարեանի (25) եւ Քիազիմ Քարապեքիի (26) մօտ : Քաուցքի եւ Ղազարեան զայն կը վերցնեն ուղղակի գերման փաստաթուղթերէն : Սարգսեան կ'առնէ զայն Կլիոնիկովի եւ Սապանինի 1926 թ.ին լոյս ընծայած մէկ գործէն, իսկ Քիազիմ Քարապեքի՝ Թրքական արխիւ-

ներէն: Դաշնագիրին պատճէնն եղած է Ֆրանսերէն, զոր, սակայն, անոնցմէ ո՛չ մէկը կը հրատարակէ: Հրատարակուածները թարգմանութիւններ են եւ ունին որոշ տարբերութիւններ: Քառօրեքի եւ Ղազարեանի տուածները պակասաւոր են՝ տեղ տեղ դանդաղ ծածկազրային անընթեռնելութեան պատճառով, մինչ հրատարակուածներուն մէջ Քարապեքիւրինը կը մնայ ամենէն հարազատն ու ամենէն ամբողջականը: Կու տանք Քարապեքիւրի թարգմանութիւնը:

ԴԱՇՆԱԳԻՐԻՆ ՊԱՏՃԵՆԸ

«1. Դաշնագիր երկու կողմերը չէզոքութիւն կը պահեն Աւստրո-Հունգարիոյ եւ Սերպիոյ միջեւ զոյուլիւն ունեցող ներկայ բախումին մէջ (27):

«2. Եթէ Ռուսիա ռազմական դործօն միջոցներով միջամտէ ընդդէմ Աւստրո-Հունգարիոյ եւ այդ ձևով ստիպողական դարձնէ 'Իերմանիոյ պատերազմի մուտքը՝ այս պատճառը Թուրքիոյ ալ պատերազմի մասնակցելուն առիթ պիտի տայ (28):

«3. Պատերազմի ընթացքին Գերման Զինուորական Պատուիրակութիւնը կը մնայ Թուրքիոյ տրամադրութեան ներքեւ: Թուրքիա կ'երաշխաւորէ զինուորական այդ պատուիրակութեան դործօն ազդեցութիւնը բանակի ղեկավարումին եւ զործողութիւններուն վրայ՝ ըստ պատերազմական նախարարին եւ զինուորական յանձնախումբի պետին միջեւ եղած ուղղակի համաձայնութեան (29):

«4. Այն սլաւոնացիներ, երբ օսմանեան հողամասերը ենթարկուին սպառնալիքի՝ Գերմանիա յանձն կ'առնէ զէնքով պաշտպանել զանոնք (30):

«5. Այս դաշնագիրը, որ կնքուած է երկու կայսրութիւններու կողմէ միջազգային բախումներու առեւ զիրար պաշտպանելու նպատակով՝ ի զօրու պիտի ըլլայ ստորագրութեան իր թուականէն սկսեալ եւ ուժի մէջ պիտի մնայ մինչեւ 31 Դեկտեմբեր 1918 (31):

«6. Եթէ որոշեալ ժամանակէն մինչեւ վեց ամիս անաջ երկու կողմերէն որեւէ մէկը չէ հրաժարած այս դաշնագիրէն՝ անկա պիտի շարունակէ ի զօրու մնալ հինգ տարուան համար եւս (32):

«7. Այս դաշնագիրը պիտի հաստատուի Նորին Վեհափառութիւն Գերմանիոյ Կայսեր եւ Բրուսիոյ Թագաւորին եւ Օսմանեան Կայսեր կողմէ եւ վաւերացուած օրինակները պիտի փոխանակուին ստորագրութեանէն ետք մէկ ամսուան ընթացքին (33):

«8. Այս դաշնագիրը դադարի պիտի մնայ եւ միայն պայմանագիր երկու պետութիւններուն համաձայնութիւնով կրնայ հրապարակուիլ» (34) :

Դաշնագիրը կը կրէ ստորագրութիւնները Պոլսոյ դերման դեսպան Պարոն Փոն Վանկենհայմի եւ Օսմանեան Կայսրութեան Վարչապետ եւ արտաքին գործերու նախարար Սայիտ Հայիմի վերջինը, ըստ Վանկենհայմի թիւ 409 հեռագիրին, մասնաւոր կերպով կը փափաքէր, որ դաշնագիրը անմիջապէս վաւերացուէր, «որպէսզի թուրքեան կապուէր առանց պայմանի, եթէ նոյնիսկ ինք չպտնուէր պաշտօնի վրայ» (35) : Նոյն օրն իսկ, իր թիւ 408 հեռագիրով, Վանկենհայմ կ'իմացնէր դերման արտաքին գործերու նախարարութեան, թէ «զինակցութեան դաշնագիրը ստորագրուեցաւ այս կէսօրէ ետք ժամը չորսին» (36) :

2 Օդոստոսի 1914 թուակիր այս դաշնագիրին՝ մեզ ամենէն աւելի հետաքրքրող յօդուածը կը մնայ թիւ չորսը, որով Գերմանիա յանձն կ'առնէր պաշտպանել որեւէ հողամաս, որ կրնար հետագային ենթարկուիլ որեւէ ձեւի սպառնալիքի : Հոն, այդ յօդուածին մէջ, ոչ սպառնալիքին ձեւը եւ ոչ ալ ուղղութիւնը կան յիշուած. չի յիշուիր նաեւ թէ Օսմանեան Կայսրութեան ո՞ր մէկ մասին մէջ կրնան դտնուիլ սպառնալիքի ենթարկուելիք հողամասերը : Բառը դործածուած է յղնակիով, ուրեմն անիկա կը տարածուի Օսմանեան Կայսրութեան ամբողջականութեան վրան : Աւելին, թիւ չորս յօդուածը նոյնքան զօրաւոր սպառնալիք կը նկատէ դիւանագիտականը, որ հետագային կրնայ վերածուիլ զինուորականի, եւ արդէն «սպառնալիք» տարազին անվերադիր ձգուիլն ինքնին կ'ենթադրէ անոր նկարագիրին համապարփակութիւնը. ահա թէ ինչու համար այսօր բնաւ ալ տարօրինակ չէ, մանաւանդ սրամտութիւն չէ, ընդունիլ թէ թիւ չորս յօդուածին տրամադրութիւններուն համաձայն սպառնալիք կրնան նկատուիլ 8 Փետրուարի 1914 թ.ին թուրքիոյ եւ Ռուսիոյ եւ 10 Մայիսի 1914 թ.ին թուրքիոյ եւ հոլանտացի Վեստենենկի ու նորվեկիացի Հոֆի միջեւ կնքուած համաձայնագիրները Արեւմտեան Հայաստանի մէջ իրագործուելիք բարենորոգումներուն ի խնդիր, որոնք միշտ ալ իրենց սողերուն ետին ունեցած են, ըստ դիւանագիտութեան եղրակացութեան եւ տրամաբանութեան, տարածողական ախորժակները ուստին, բաներ, որոնց դէմ Գերմանիա կը խոստանար զէնքի ուժով պաշտպանել թրքական իրաւունքները :

Բայց զինուորական այս դաշնագիրը չ'ըսեր ամէն բան՝ ճիշդ այնպէս ինչպէս որ անիկա չըսաւ ամէն բան զայն ստորագրող թուրք վարչապետին եւ արտաքին գործերու նախարարին, Սայիտ Հայի-

մին, որուն, իրականութեան մէջ, ուսերուն վրայէն էր որ կատար-
 ւած էր գործառնութիւնը բանակցութիւններուն՝ ընդմէջ գերման
 իշխանութիւններուն եւ Էնվեր-Յալէաթ-ձեմալ եռապետութեան :
 Սալիտ Հալիմ չեղաւ այն ինչ որ կը կարծէր ինքզինք. ընդհակառա-
 կը, անիկա յաճախ մնաց կամակատարը Երիտասարդ-Թուրք Կու-
 սակցութեան, որովհետեւ եզրիպտացի արարի իր կառոյցին մէջ կար
 ոչ մէկ բան, որ զինք կապէր թուրանականութեան մը դաղափարա-
 բանութեան, այլ անկէ շատ առաջ՝ իրն էր փառասիրութիւնը վար-
 չապետի եւ արտաքին դործերու նախարարի զոյգ աթոռներուն փա-
 րած ըլլալու դիտակցութեան. արդէն իրը չէր զօրաւոր անձնակա-
 նութիւնը պետական մարդուն, ինչպէս որ իրը չեղաւ արժանաւո-
 րութիւնը կայսրութիւն մը վարելուն. աւելին, իրը չեղաւ նաեւ բա-
 րի դիւտը, թէ արտաքին աշխարհի մարդերուն եւ անոնց հաշիւնե-
 րուն վրայ հիմնուած բարեկամութիւն մը չէր որ պիտի կարենար
 փրկել անկումի եզրին հասած կայսրութեան վարկը, այլ անկէ շատ
 առաջ՝ բարեկամութիւնը որ պէտք էր որ հիմնուած ըլլար հասկա-
 ցողութեան եւ գործակցութեան վրայ ընդմէջ կայսրութեան բաղ-
 կացուցիչ տարրերուն, որովհետեւ, ինչպէս 2 Նոյեմբերի 1914 թ.ին
 իր թիւ 1205 հեռագիրով կ'ըսէր Վանեկնհայմ. «եթէ պարտուինք
 կամ տկարանանք, շատ հաւանաբար անկարող պիտի ըլլանք – հա-
 կառակ բարեկամութեան դաշնագիրին – պաշտպանել թուրքիան բո-
 յոր դաշնակցութիւններու եւ պատահարներու դէմ» (37) :

Գուցէ այս իրականութիւնն էր միակ պատճառը, որ թուրք
 եւ գերման զինուորական դաշնագիրի ստորագրութեան վաղայաջորդ
 օրերը եղան օրերն անստուգութեան : Հարցական էր ամէն ինչ :
 Զինուորական դաշնագիր մը կ'ենթադրէր պատերազմ, իսկ պատե-
 րազմը՝ պատասխանատուութիւն : Դաշնագիրին երկրորդ յօդուածով
 թուրքիա կը խոստանար զէնքի դիմել անմիջապէս որ Ռուսիա ձեռ-
 նարկէր պատերազմական գործողութիւններու, հակառակ որ առա-
 ջին յօդուածով կը խօսուէր չէզոքութեան մը մասին : Այս բոլորը
 կը նշանակէր Օսմանեան Կայսրութեան անկախ պետութիւն մը ըլ-
 լալու իրավիճակը կապել Ռուսիոյ զինուորական եւ քաղաքական
 շարժումներուն ու զայն յանձնել Գերմանիոյ ու դառնալ գերմանա-
 կան պարզ գաղութ ու կամաւոր կերպով ենթարկուել անոր, բան
 մը, որուն փոխան Սալիտ Հալիմ կը գտնէր կառչելիք ո'չ մէկ բան՝
 անով կարենալ փոխանակելու համար կայսրութեան ներկան :

Կատարուած էր այն ինչ որ անդառնալի էր այլեւս : 2 Օգոս-
 տոսի զինուորական դաշնագիրին ստորագրութեան յաջորդ օրն իսկ
 Օսմանեան Կայսրութիւնն արդէն իսկ գաղութ նկատող Գերման
 Կայսրութիւնը հրահանդեց Կէօպէն եւ Պրեսպալու ռազմանաւերուն

չարժիլ դէպի Վոսփոր եւ առաջարկեց որ ծովակալ Ջուխոնն ստանձնէր Թրքական ծովուծի ընդհանուր հրամանատարութիւնը (38), երբ միւս կողմէն, ինչպէս կը յայտնէր Վանկենհայմի թիւ 416 հեռագիրը, «էնվեր եւ Լիման կը փափաքէին անմիջապէս պատերազմ յայտարարել Ռուսիոյ դէմ, որպէսզի կարելի ըլլար դրակել անթիւ հեռագիրի կազմածներով օժտուած այն շողենաւերը, որոնք կը գտնուին հոս: (Բայց) Մեծ Վեզիրը եւ... (ծածկագիրն անվերծառնի) դէմ են, որովհետեւ

«1. Թրքական զօրակոչը, որ եռանդով սկսաւ, տակաւին չէ աւարտած:

«2. Պուլկարիոյ դերքը տակաւին որոշ չէ, եւ առանց Պուլկարիոյ ուղղակի յարձակում մը Ռուսիոյ վրայ կարելի չէ: Եւ

«3. Կը վախնանք, որ պատերազմի յայտարարութեան մը վրայ, Օսմանը (39) կրնայ գրաւուիլ Անգլիոյ կողմէ:

«Համոզեցի զօրավար Լիմանը, որ առ այժմ սպասէր մինչեւ որ աւելի յստակ բան մը գիտնայինք Պուլկարիոյ որոշումին մասին: ... Փափաքելի պիտի ըլլար, որ զօրավար Լիմանը անմիջապէս հրահանգ ստանար մեր ընդհանուր սպայակոյտէն» (40):

Լիման Փոն Սանտրըզ ստացաւ իր հրահանգները ճիշդ այնպէս ինչպէս Վանկենհայմը, որուն ուղղուած դադտնի եւ ստիպողական թիւ 305 հեռագիրով Եակով կը յայտնէր, թէ «փափաքելի պիտի ըլլար Կովկասն ըմբոստացնել» (41), իսկ յաջորդ օրը, 4 Օգոստոսին, նոյնպէս դադտնի եւ ստիպողական եղող թիւ 313 հեռագիրով, Եակով կ'ըսէր, թէ «հաւանական է, որ այսօր կամ վաղը Անգլիան պատերազմ յայտարարէ մեզի դէմ. (Եւ) որպէսզի Անգլիոյ առած քայլին ազդեցութեան տակ (Բարձրագոյն) Դուռը չկարենայ վերջին վայրկեանին փախուստ տալ մեզմէ՝ այսօր, եթէ կարելի է, Թուրքիոյ կողմէ Ռուսիոյ դէմ պատերազմի յայտարարութիւնը մեծ կարեւորութիւն պիտի ներկայացնէ» (42):

Եւ նոյնհետայն Վանկենհայմ սկսաւ ճնշումի իր քաղաքականութեան: Եւ որպէսզի իր ընթացքը որեւէ կասկածի տեղի չտար՝ իր իսկ հաւանութեամբն ու գիտակցութեամբը էնվեր սկսաւ բանակցութիւններու Պոլսոյ ռուսական դեսպանատան ղեկավարական կցորդ Լէոնտելի հետ: Օգոստոսի 5-ի խօսակցութիւնները ճշմարտութիւնները սքօղելէ դուրս ոչ մէկ բան ընելու նկարագիրը ունէին: Ըստ էնվերի՝ Կովկասի վրայ կատարուած Թրքական կեդրոնացումները հակառուս ըլլալու ոչ մէկ ընթացք ունէին եւ Թուրքիան պատրաստ էր իր բանակները Կովկասէն քաշելու եւ զանոնք գործածելու Պալքաններու մէջ Աւստրիոյ դէմ՝ պայմանով որ, սակայն, Ռուսիան յաջողեցնէր հաշտութիւն մը ընդմէջ Թուրքիոյ եւ Պալքանեան պե-

տուժիւններուն եւ ապահովէր Եգէականի կղզիներուն եւ արեւմտեան թրակիոյ յանձնումը իրեն (43) :

Թէ Ռուսիա ի՞նչպէս դիմաւորեց այս բոլորը՝ այսօր շատ յստակ է ուսմ-թրքական յարաբերութիւններու ուսանողին համար. բայց թէ Օսմանեան Կայսրութեան Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան կառավարութիւնը, մանաւանդ ներքին կորիզն անոր, կը զտնուէր դէմ յանդիման պատերազմին՝ յստակ է աւելի : Ստորագրուած պինտորական դաշնագիրը Թուրքիան կը դնէր պարտաւորութիւններու ներքեւ, եւ Պերլինը չէր որ պիտի դեղեւէր ու ձգէր որ Բարձրագոյն Դուռը տատամէր : Մեծագոյն հարցը Թուրքիոյ համար, սակայն, կը մնար դաշնագիրէն դուրս մնացած սակարկութեան իրագործումը. ահա թէ ինչո՞ւ համար 5 Օգոստոսին, կէսօրէն ետք ժամը մէկին, Սայիտ Հալիմ իր մօտ կանչեց Վանկենհայմը եւ անոր ներկայացուց իր վիտաւորած կառավարութեան պահանջները : Ըստ այդ պահանջներուն՝

«1. Գերմանիա կը խոստանայ իր օժանդակութիւնը առանձնաշնորհումներու վերացումի (հարցիմ) մէջ :

«2. Գերմանիա կը խոստանայ օժանդակել (Թուրքիոյ) անհրաժեշտ հասկացողութեան մը դալու համար Ռումանիոյ եւ Պուլկարիոյ հետ եւ ջանադիր կ'ըլլայ, որ Թուրքիա ապահովէ արդար համաձայնութիւն մը Պուլկարիոյ հետ՝ ձեռք անցունելիք պատերազմական աւարներու առնչութեամբ :

«3. Գերմանիա դաշնագիր պիտի չստորագրէ մինչեւ որ պարպուին թրքական (բալք) հողամասերը, որոնք պատերազմի ընթացքին կրնան գրաւուիլ թշնամիներու կողմէ :

«4. Երբ Յունաստան պատերազմի մտնէ եւ պարտուի Թուրքիայէն՝ Գերմանիա ջանադիր պիտի ըլլայ որ (Եգէական) կղզիները վերադարձուին (Թուրքիոյ) :

«5. Գերմանիա Թուրքիոյ համար պիտի ապահովէ պզտիկ սրբագրութիւն մը անոր արեւելեան սահմանին վրայ, որ Թուրքիան ուղղակի յարաբերութեան մէջ պիտի դնէ Ռուսիոյ մահմետականներուն հետ :

«6. Գերմանիա պիտի ջանադիր ըլլայ, որ Թուրքիա ստանայ պատշաճ պատերազմական հատուցում մը» (44) :

Յաջորդ օրը, Օգոստոսի 6-ին, գերման դեսպանը Բարձրագոյն Դուռ փոխանցեց Սայիտ Հալիմի ներկայացուցած պահանջներուն պատասխանը, որուն համաձայն, «եթէ Թուրքիան 2 Օգոստոսի դաշնագիրով Գերմանիոյ հետ ունեցած իր համաձայնութեան վրայ հաստատ մնալով պատերազմի մտնէ Երբեակ Համաձայնու-

Թեան պետութիւններուն դէմ՝ Գերմանիա իր կողմէ իր դաշնակից պետութեան կը խոստանայ ստորեւ յիշուածները .

«1. Գերմանիա թիկունք պիտի կանգնի Օսմանեան Կայսրութեան՝ առանձնաշնորհումներու վերացումին համար տանելիք անոր աշխատանքներուն մէջ :

«2. Գերմանիա կը խոստանայ իր աջակցութիւնն ընծայել Թուրքիոյ՝ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ հետ ձեռնարկելիք անոր բանակցութիւններուն ընթացքին : Գրաւուելիք հողամասերու բաժանումի պարագային՝ Գերմանիա իր ծառայութիւնները ի սպաս պիտի դնէ Պուլկարիոյ հետ Օսմանեան Պետութեան շահերուն ի նպաստ կարգադրութեան մը համար :

«3. Գերմանիա խաղաղութիւն պիտի չկնքէ մինչեւ որ թշնամի զօրքերուն կողմէ դրաւուած օսմանեան հողամասերը ազատագրուին :

«4. Եթէ ներկայ պատերազմին մասնակցելով Յունաստան պարտուի՝ Գերմանիա պիտի աշխատի վերջին պատերազմի ընթացքին (45) Թուրքիայէն խլուած կղզիներուն Թուրքիա վերադարձին համար :

«5. Գերմանիա պիտի աշխատի Թուրքիոյ արեւելեան սահմանները սրբագրել այնպիսի ձեւով մը, որ Թուրքիոյ եւ ռուսաբնակ մահմետական ժողովուրդներու միջեւ հաստատուի ուղղակի շփում :

«6. Գերմանիա ի դործ պիտի դնէ իր ազդեցութիւնը, որպէսզի Թուրքիա պատշաճ հատուցում ստանայ պատերազմական իր կորուստներուն համար :

«Հասկնալի է, որ վերոյիշեալ յօդուածներուն երկրորդին բովանդակութենէն զատ մնացեալներուն համար Գերմանիա իր եւ իր դաշնակիցներուն պատերազմէն յաղթական դուրս դալէն ետք է որ պատասխանատու պիտի կարենայ նկատուիլ» (46) :

Վաւերագիրին բովանդակութիւնը կու տայ նաեւ Սարգըսեան (47), որ, սակայն, չունի յօդուած երեքը : Մնացեալներն ամփոփումն են Բարձրագոյն Դուռ յանձնուած նամակին, ուր մեզ հետաքրքրողը կը մնայ յօդուած հինգը, եւ որուն բովանդակութիւնը ամբողջացնելու կու գայ յօդուած երեքը :

Օգոստոսի 2-ի եւ Օգոստոսի 6-ի միջեւ կայ հսկայ տարբերութիւն : Երբ դաշնագիրի չորրորդ յօդուածով Գերմանիա կը խոստանար դէնքով պաշտպանել Օսմանեան Կայսրութեան սպառնալիքի ենթարկուելիք հողամասերը՝ Օգոստոսի 6-ի հինգերորդ յօդուածով անիկա կը խոստանար Թուրքիոյ արեւելեան սահմանները, այսինքն Արեւմտեան Հայաստանը, հասցնել այնպիսի դրութեան մը, որ

Թուրք եւ ռուսիաբնակ մահմետականներ կարենային միանալ: Յօդ-
 ւածը չի մասնաւորեր մահմետական այդ ժողովուրդները, սակայն
 պղտիկ ակնարկ մը կովկասի վրայ բաւ է ցոյց տալու, որ «մահմե-
 տական ժողովուրդներ» բացատրութեան ներքեւ կ'իյնան ազրպէյ-
 ճանցիները, Ատրպատականի թաթարները, տաղստանցիները, կա-
 պարտենցիները, նախիջևեանեան թաթարները, կումիքները, նո-
 կայները, պալքարները եւ քարաչայները: Աւելին, Օսմանեան Կայս-
 րութեան արեւելեան սահմաններուն սրբազրումով, որ առաջին իսկ
 Հերթին կ'ենթադրէր վերացումը հայութեան, Գերմանիա խոստա-
 ցած կ'ըլլար աջակցիլ Թուրքիոյ՝ համաթուրանական անոր դադա-
 փարաբանութեան իրագործումին, որ, սակայն իր ճամբուն վրայ
 կը հանդիպէր հայկական թումրին, եւ որուն վերացումը Հիմնական
 էր, եթէ Գերմանիա կապուած պիտի մնար իր խոստումին:

Օգոստոսի 6-ի պատասխանին յօդուած վեցէն ետք տրուող
 յաւելուածական բաժինն այս պարագային ոչ մէկ իմաստ ունեցաւ,
 որովհետեւ յօդուած հինգով կը խօսուէր ոչ ժամանակի եւ ոչ ալ
 սահմանային սրբազրումի ձեւին մասին. ընդհակառակը, այսօր ամէն
 տուեալ կայ հաւատարմութիւն, թէ այդ յօդուածով Գերմանիա վկայա-
 ւիբը տուած եղաւ թրքական հետագայ վայրագութիւններու ի կա-
 տար ածումին՝ ի խնդիր սահմանային սրբազրումներու: Սա համո-
 ղումը որեւէ մէկէն առաջ եղաւ նոյնինքն Թուրքիոյ, թրքութեան
 կատաղի երագատեսինը, Պեհլուտին Շաքիրինը, որ հետագային
 պիտի յայտարարէր Ալեքսանդր Պատիսեանին, թէ «հայերը կանգ-
 նած են մեր համիւլամական եւ համաթուրքական սրբազան իտէալ-
 ներու իրականացման ճամբուն վրայ, եւ մենք անխուսափելիօրէն
 կը բախուինք անոնց հետ: Ատիկա վեր է եւ դուրս է մեր անձնական
 զգացումներէն եւ տրամադրութիւններէն: Մենք հարկադրուած ենք
 տարերայնօրէն ոչնչացնել մեր ճամբու վրայէն այն ամէնը, ինչ որ
 արգելք կը հանդիսանայ մեր ազգային իտէալներուն» (48): Ահա
 թէ ի՞նչ կը հասկնար Թուրքը սահմանային սրբազրումով, եւ ահա
 թէ ի՞նչ կը խոստանար Գերմանական Կայսրութիւնը Օսմանի յա-
 ջրդներուն:

Օգոստոսի 2-ի զինուորական դաշնագիրէն եւ Վանկենհայմի
 6 Օգոստոսի թուակիրէն մինչեւ 9 Հոկտեմբերի տարածուող ժամա-
 նակը բարդ է շատ եւ դուրս կը մնայ մեր հետաքրքրութենէն: Կը
 բաւէ միայն նշել, թէ այս ժամանակաշրջանը նուիրուեցաւ սակար-
 կութիւններու, որոնք, սակայն, յաճախ ալ կեցան զինուորական
 մտահոգութիւններէն անդին տեղ մը՝ տնտեսականի սահմաններուն
 մէջ, եւ էնվերի կողմէ չինայուած ճիգերու՝ Օսմանեան Կայսրու-
 թիւնը կապելու համար գերման պատերազմական կառքին:

Բայց էնվեր միշտ չէր որ կրցաւ պահել ծրագրումն ու ղեկավարումը թուրք-գերմանական բանակցութիւններուն: Պատահեցաւ յաճախ, որ այդ բանակցութիւնները վտանդուին ղժկամութեանը պատճառով իր բարեկամներուն, եւ Վանկենհայմ մէկէ աւելի անդամներ ստիպուած եղաւ հաղորդելու Պերլին կացութեան լրջութիւնը: Իր 6 Սեպտեմբերի թիւ 725 եւ 8 Սեպտեմբերի թիւ 752 հեռագիրներով, օրինակի համար, անիկա կ'իմացնէր Պերլինի իր կառավարութեան, թէ էնվեր իր ուղած ձեւով շարժելու եւ գործելու անկարող էր դարձած եւ Օսմանեան Կայսրութեան պատերազմի մուտքը Գերմանիոյ կողքին վտանդուած էր շատ՝ պարզօրէն իր գործակիցներուն ղժկամութեան պատճառով (49): Իրականութեան մէջ թրքական դաշիճը բաժնուած էր երկուքի եւ դաշիճէն հրաժարած՝ տնտեսական նախարար Ճաւիտ պէյը, երկրագործական եւ առեւտուրի նախարար Սուլէյման էլպուսթանին, հանրօգուտ շինութիւններու նախարար Չիւրիւքսուլու Մահմուտ փաշան, եւ փոսթ-հեռագրական նախարար Ոսկան Մարտիկեանը, իսկ կառավարութեան կազմին մէջ էին մնացեր պատերազմական նախարար էնվերը, ծովային նախարար Ճեմալը, ներքին գործերու նախարար Թալէաթը, Շէյխիւլիսլամ Պայրի էֆէնտին, արդարադատութեան նախարար Իպրահիմը եւ կրթական նախարար Շիւքրիւն: Իսկ վարչապետ եւ արտաքին գործերու նախարար Սայիտ Հալիմը վերջին վայրկեանին ընդդիմանալով թուրքիոյ պատերազմի մուտքի զաղափարին՝ փորձեր էր հրաժարիլ դաշիճէն, եւ, սակայն, էնվերի, Ճեմալի եւ Թալէաթի պնդումներուն վրայ հրաժարեր էր հրաժարելու զաղափարէն (50): Ահաւասիկ, իրերու այս դրութեան մէջ էր որ քանի մը օր ետք, ամբողջացնելու համար դաշիճին կազմը, Թալէաթ ստանձնեց փոխ-նախարարութիւնը տնտեսական գործերու, եւ կրթական նախարար Շիւքրիւն՝ փոխ-նախարարութիւնը փոսթ-հեռագրական նախարարութեան. հանրօգուտ շինութիւններու նախարարութիւնը վստահուեցաւ իշխան Ապպաս Հալիմ փաշային, եւ երկրագործական ու առեւտրական նախարարութիւնները՝ Ահմետ Նեսիմիին:

Կազմուած էր դաշիճը «Իրաւ» թուրքերուն: Այլեւս ոչ մէկ խոչընդոտ կար, որ արգելէր էնվերը վազելէ իր փառասիրութիւններուն իրագործումին, որուն համար մղուող խուլ պայքարը վերջապէս կը հասնէր իր յրումին եւ որուն գործնականացումը կախում ունէր զինուորական այն գործողութիւններէն, որոնք հրամայական էին որեւէ ատենէ աւելի: Ահա թէ ինչու համար Սեպտեմբերի 26-ին փակելէ ետք նեղուցները՝ Հոկտեմբերի 7-ին էնվեր հրահանգեց Օսմանեան Կայսրութեան զինուորական սպայակոյտի պետ գերմանացի Պրոնզարթ Ֆոն Շիլլենտորֆի՝ պատրաստել ծրագիրը զինուորական

անմիջական գործողութիւններու: Յաջորդ օրը էնվիրի ներկայացուած ծրագիրն ընդունուեցաւ անփոփոխ. ըստ այդ ծրագրերին (51), «օսմանեան ուժերը ստորեւ յիշուած հրահանգները պիտի գործադրեն կամ անոնց համար պիտի նախապատրաստուին»:

«1. Նաւատորմիդը ծովային զերակայութիւն ձեռք պիտի ձգէ առանց պատերազմ յայտարարելու՝ սեւ ծովեան ուղւոսական նաւատորմիդին վրան յարձակելով: Նաւատորմիդին շարժումի անցնելու ժամանակը կը ձգուի ծովակալ Զուխոնի դատողութեան:

«2. Պատերազմի յայտարարութենէն ետք Նորին Վեհափառութիւնը Սրբազան Պատերազմ պիտի յայտարարէ դաշնակիցներու թշնամիներուն դէմ (52):

«3. Կովկասեան սահմանի օսմանեան բանակը պարտութեան պիտի մատնէ այդտեղի ուղւոսական բանակը (53):

«4. Անհրաժեշտութեան պարագային՝ եթէ Ութերորդ Բանակը Տասներկրորդ Բանակին հետ միասին դէպի Եգիպտոս իսկ շարժի՝ այդ շարժումը կարելի չէ վեց շաբաթէն առաջ (54):

«5. Եթէ Պուլկարները միասին շարժումի անցնին՝ օսմանեան բանակէն մաս մը պուլկարներուն պիտի օգնէ Սերպլոյ դէմ, իսկ անհրաժեշտութեան պարագային՝ անիկա պիտի քալէ Յունաստանի եւ Ռումանիոյ վրայ (55):

«6. Եթէ Ռումանիա մեզի հետ ըլլայ՝ այդ պարագային օսմանեան ուժերը ուղւոսական բանակին հետ պիտի յարձակին Ռուսիոյ վրայ (56):

«7. Երեքէն չորս բանակներ պատրաստուած են ծովու վրայէն դէպի Օտեսա շարժելու համար: Սակայն ասոր գործադրութիւնը մեր ծովային զերակայութենէն եւ Ռումանիոյ հետ Պուլկարիոյ դիրքորոշումէն կախում ունի: Գործադրութեան ժամկէտը կախում ունի գերմանական եւ աւստրիական բանակներու Ռուսիոյ ներսերը յառաջանալու աստիճանէն (57):

«Այս կողմէն Պալքանեան Պետութիւններու Գերմանիոյ կողքին դառնուիլն ապահովուած չըլլալուն համար՝ այդ կողմէն այդ պետութիւններուն իրենց բոլոր բանակներով մեր կողքին շարժիլն ապահովուելու է: Մինչեւ որ այս նպատակն իրագործուի՝ օսմանեան բանակը Թուրքիոյ եւ Մարմարայի ծովեզերքը պիտի մնայ: Պալքանեան Պետութիւններուն թշնամական դիրքորոշումին պարագային՝ անիկա պիտի քալէ Պուլկարիոյ վրայ (58):

«Օսմանեան բանակի պատերազմական գործողութիւններուն եւ ուժին մասին այստեղի գերման զինուորական կցորդին միջոցով տեղեկագրուեցաւ: Մեր այս նպատակներուն կապակցութեամբ Ձեր

համաձայնութիւնը կամ մերժումը Ձեր մեզի իմաց տալը կը խընդրենք (59)» (60) :

Ըստ Ղազարեանի մէջբերած վաւերագրերին՝ անիկա ստորագրուած է վերին փոխհրամանատար Էնվերի կողմէ, իսկ ըստ Քարապետբերի՝ Պրոնզարթի, եւ կ'արտահանէ զերման ռազմական մտահոգութիւնները, որոնց վրայ, սակայն, կու գայ բարդուելու թրջականն ալ, որ իր արտայայտութիւնը կը դռնէ երբորդ յօդուածով: Զինուորական բառամթերքով տրուած այդ յօդուածը այլ բան չ'ըսեր եթէ ոչ հրահանգել ամբողջական քանդումը Հայաստան աշխարհին, որուն արեւելեան թիկունքին նստած կը մնայ ռուսական բանակը: Այդ բանակին պարտութիւնը պէտք է որ ըլլայ կատարեալ դործողութիւն մը, որ, սակայն, կ'ենթադրէ նաեւ կտրատումը անոր օժանդակելու հասնիլիք բոլոր տարրերուն, չքացումը անոնց, եւ միայն ապա խորտակումը անոր՝ որպէս բանակի: Արդէն 3 Օգոստոսի իր գաղտնի եւ ստիպողական ու թիւ 30Ֆ հեռագրերով Եսկով կը պահանջէր, որ յայտարարուէր Սրբազան Պատերազմը եւ ըմբոստանար Կովկասի մահմետականութիւնը (16), երբ վաղուց, Յուլիսի 30-էն առաջ իսկ, Արեւմտեան Հայաստանի եւ Կովկասի թրջութիւնն ու մահմետականութիւնը, մանաւանդ երիտասարդ-թուրք ղեկավարութիւնը, որոշած էին, ինչպէս կը զեկուցէր Կարսի գերման հիւպատոսը Յուլիսի 30-ի իր զեկուցագրերով, պատերազմի մը պարագային ըմբոստութիւն եւ յեղափոխութիւն յառաջացնել Կովկասի մէջ (62) :

Ժլատ է զինուորական լեզուն եւ անով տրուած որեւէ հրահանգ իր տողերուն ետին ունի ամբողջ կառոյց մը հրահանգներու, զորոնք պէտք է հասկնալ լռելեայն: Տասը բառերէ կազմուած հրահանգ մը իրեն հետ ա'նպայման կը տանի տասը էջի մէջ բաւելիք խօսքերու եւ հրահանգներու հաւաքածոյ մը, ահա թէ ինչո՞ւ համար կովկասեան սահմանի ռուսական բանակի պարտութիւնը շատ աւելի բան կը նշանակէ որպէս հրահանգ եւ իմացում՝ քան որեւէ այլ ձեւի խօսք: Կովկասի մէջ ռուսական պարտութեան կը զուգորդուին նաեւ քանդումը այդ բանակին գրաւած հողամասերուն, խորտակումն ու ոչնչացումը այդ հողամասերու բնակչութեան եւ այդ ձեւով սրբազրումը կովկասեան սահմանագիծին, որ պարզ խօսքով պիտի նշանակէ հայութենէ ամայացումը Արեւմտեան Հայաստանի, բարձումը այդ հայութիւնով առկայ եղող Հայկական Հարցին, հեռացումը այդ հարցով ստեղծուած եւ խթանուած ռուսական ախորժակներուն, քանդումը արեւմտեան պետութիւններու մրցակցութիւններուն ի վնաս Օսմանեան Կայսրութեան, չքացումը մանաւանդ

բարենորոգումներուն եւ առ այդ 8 Փետրուարի 1914 թ.ին Ռուսիոյ եւ Թուրքիոյ եւ 10 Մայիսի 1914 թ.ին Թուրքիոյ եւ Հոլանտացի Վեստիննիկի ու նորվեկիացի Հոֆի միջեւ ստորագրուած համաձայնագիրներուն: Այս ձեւով եւ միայն ա'յսպէս էր որ կարելի էր ուղղակի չիում հաստատել հոն, Արեւմտեան Հայաստանի ամայացած հողերուն վրայ հաստատուելու դալիք Թուրքին եւ Կովկասի մէջ եւ անկէ անդին գտնուող մահմետական եւ Թրքական տարրերուն միջեւ:

Պրոնզարթ-էնվերի հեռագիրէն ետք Օսմանեան Կայսրութեան պատերազմական նախարարը ա'լ կարիք չդրաց անոր տրուելիք պատասխանին, այլ նոյն օրն իսկ, Հոկտեմբերի 9-ին, հրահանգեց ծովակալ Զուխոնին, որ ձեռնարկէր պատերազմական գործողութիւններու: Քանի մը օր ետք, որուն ընթացքին Պերլինէն ստացուած էր պահանջուած ոսկին, էնվեր ներկայացաւ Վանկենհայմին եւ ոռուսական ծովային ուժերուն վրայ կատարուելիք յարձակումին ծրագիրը ներկայացուց անոր, որպէսզի զրկուէր Գերմանական Կայսրութեան ընդհանուր սպայակոյտի պետ՝ մարաջախտ Մոլթզէին՝ առ ի վաւերացում: Վանկենհայմի հետ ունեցած իր տեսակցութեան մէջ էնվեր ճշդեց, որ կովկասեան ճակատին վրայ օսմանեան բանակին պարտականութիւնը պիտի ըլլար հակառակիլ ոռուսական բանակին. յարձակողականի մասին ոչ մէկ խօսք ունէր: Յառաջխաղացք մը Եգիպտոսի մէջ պիտի պահանջէր առնուազն վեց շաբթուան նախապատրաստութիւն եւ առաւելագոյն Թրքական երկու բանակէ աւելի ուժ տրամադրելի պիտի չըլլար այդ գործին համար: Իսկ Թրքական ուժերուն հիմնական մասը պատրաստ վիճակի մէջ պիտի մնար Թրակիոյ մէջ. հոս ալ զանոնք գործնական կերպով հրապարակ նետելու ոչ մէկ ծրագիր կար: Աւելին, առայժմ Օտեսայի շրջանին վրայ կատարուելիք ծովային յարձակողականի մը ծրագիր գոյութիւն չունէր:

Այսօր յայտնի չէ, թէ Վանկենհայմ ի՞նչ զգաց երբ այս բոլորը Պերլինի իր պետերուն հաղորդեց 22 Հոկտեմբերի թիւ 1087 հեռագիրով. բայց բաւական յստակ էր դիրքը Զիմմերմանի, որուն համաձայն անյապաղ պէտք էր ընդունիլ ներկայացած ծրագիրը, որովհետեւ Վոսիորի ասիերուն թառած Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան լիերին շարքերուն մէջ ամէն հաւանականութիւն կար ընդգիմանալու համար էնվերի ծրագիրին:

Նոյն օրն իսկ Վանկենհայմի պնդումներուն ընդառաջելով՝ էնվեր Զուխոնին յղեց կնքուած ու դադունի հրահանգը յարձակողականին. ըստ գերման դեսպանին 22 Հոկտեմբերի թիւ 1087 հեռա-

դիրին «կնքուած հրահանգը» կ'ըսէր. «Թրքական նաւատորմիդը պէտք է որ ծովային զերազանցութիւն ապահովէ Սեւ Մովի մէջ: Գտէք ուսական նաւատորմիդը եւ յարձակեցէք անոր վրայ ուր որ ալ դանէք զայն՝ առանց պատերազմի յայտարարութեան» (63):

Տրուած էր ազդանշանը յարձակումին, եւ առ այդ՝ առաջին ուս-թրքական բախումը տեղի ունեցաւ 28 Հոկտեմբերի 1914 թ.ին եւ «թրքական» նաւատորմիդը յարձակեցաւ Թէոտոսիայի, Օտեսայի, Նովորոսիսկի եւ ուսական այլ նաւահանգիստներու վրայ: Սկսուած էր գործադրութիւնը թուրք-գերմանական սակարկութիւններուն, որոնց փոխան, ըստ Կապուտիլինի հաշտմաներուն՝ Երէտասարդ-Թուրք Կոստակցութեան կառավարութիւնը ստացաւ 5 միլիոն ոսկի՝ 1914 թ.ին, 3.5 միլիոն՝ 1915 թ.ի դարնան, 28 միլիոն՝ 1916 թ.ի աշնան, 32 միլիոն՝ 1917 թ.ի սկիզբը եւ 50 միլիոն՝ 1917 թ.ի Հոկտեմբերին, առանց հաշուելու 70 միլիոնի հասնող այլ կարգի օգնութիւնները (64):

Մինչդեռ, ըստ Պերլինի արտաքին գործերու նախարարութեան հաշուարկումներուն՝ Գերմանական Կայսրութիւնը իր պատերազմական դաշնակիցին այս կամ այն ձեւով փոխանցած էր 235,056,344 թրքական ոսկի, մօտաւորապէս 4.7 պիլիոն գերմանական մարք: 15 Մարտի 1919 թ.ի գերման արտաքին գործերու նախարարութեան ներկայացուցած հաշուարկումներն ալ կը համընկնին տրուածներուն (65):

Այս բոլորին ետին կեցողը եղաւ մանաւանդ ինչպէր, որ ընաւ չկարողացաւ ալ գիտնալ, թէ ի՞նչ արկածախնդրութեան մը կը մղէր Օսմանեան Կայսրութիւնը: Ելմազ Էօղթունայի իսկ բառերով՝ «6/12 Սեպտեմբերի 1914 թ.ին Մարն գետին վրայ տեղի ունեցող արիւնալի բախումները կեցուցին գերմանները Փարիզէն 30-40 քիլոմետր անդին: ... Ահաւասիկ, Թուրքիոյ պատերազմի մուտքը եղաւ այս դարձուածքին՝ Մարնի ճակատամարտէն ետք: Բոլոր աշխարհ կը հաւատար, թէ մինչեւ այն ատեն կանոնաւոր պատերազմ մղող Գերմանիան կայծակնային ճակատամարտով մը պարտութեան մատնելէ ետք Ֆրանսան՝ իր ամբողջ ուժովը պիտի իյնար Ռուսիոյ վրայ: Սակայն Մարնի ճակատամարտէն ետք յստակ կերպով հասկըցուեցաւ, թէ այս տեսակ բան, պատերազմին անյայտ ալ տեւողութեամբ ա՛նպաման ի շահ Գերմանիոյ երկարաձգումը, կարելի չէր: Այս մէկը չհասկցողը եղաւ միայն ինչպէր փաշան: Տնտեսական բոլոր կարելիութիւններու տէր եղող մեծ տէրութիւններու հետ աշխարհի ծովերուն վրայ Թուրքիան իրեն անհրաժեշտ չեղող պատերազմի մը նետողը եղաւ ինչպէր փաշան» (66):

Ինչ որ ալ եղած ըլլան ճշմարտութիւնները՝ էնվեր եւ իր բարեկամները՝ ձաւիտ, Սալիլ եւ Թալէաթ՝ մաքրած եւ պատրաստած էին ճամբան, ուրկէ անցք մը դէպի Թուրանիա ա'լ ժամանակի հարց էր միայն: Սայիտ Հալիմի վերջին պահու ընդդիմութիւնը ռազմական դործողութիւններուն՝ չէր կրնար, եւ չկրցաւ ալ, կասեցնել յառաջընթացը շարժումին: Իրականութեան մէջ դաղտնի համաձայնութիւն մըն էր որ կը կապէր իրարու Երիտասարդ-Թուրք Կուսակցութեան Կեդրոնական Մարմինին էնվերեան խմբակին անդամները, որոնք ի շահ Թուրանականութեան եւ ի փառս իրենց պզտիկ անձեւուն՝ նետուեր էին պատերազմին կրակէն ներս ու վճռած ճակատագիրը հայութեան, եւ այդ ձեւով նետած հիմերը Հայկական Տասնհինգին:

Զինուորական եւ քաղաքական ոստայնի մը մէջ ինկած Հայաստան աշխարհը դժուար թէ կարենար անվնաս դուրս դալ ռուս-թրքական եւ ռուս-գերմանական բախումներէն, որոնց ոլորտին մէջ պիտի ճզմուէր անիկա, ու ճզմուեցաւ ալ, կրունկներուն ներքեւ ետ ու յառաջ շարժող բանակներուն: Հոկտեմբերի 28-էն ետք պատահող ռուս-թրքական բախումները դուրս կը մնան մեր հետաքրքրութեան սահմաններէն, եւ, սակայն, սերտ կերպով կ'առնչուին Հայկական Տասնհինգի յառաջընթացին: Վերբերումը այս բոլորին, վերլուծումը ռուս եւ Թուրք բանակներու շարժումներուն, այդ շարժումներուն համար տրուած հրահանգներուն եւ այդ բախումներուն ընթացքին կատարուող դիւանադիտական եւ զինուորական յարաբերութիւններուն թուրք եւ գերման դաշնակիցներուն, ինչպէս նաեւ Թուրք եւ պուլկար, աւստրո-հունդար եւ այլ պետութիւններու միջեւ, այսօր, աւելի քան երբեք, անհրաժեշտութիւններ են, եթէ որոշած ենք մատչիլ Հայկական Տասնհինգի ամբողջական պատմութեան եւ լոյսին բերել ճշմարտութիւնն անոր:

Մ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

1. Karl Kautsky, *Outbreak of the World War: German Documents* (New York, 1924), p. 148. Այս եւ հետագայ բոլոր ընդգծումները կը պակաս-նիմ վաւերագիրներում: Իսկ վաւերագիր մը յստակացնելու կամ պակասը բառերը գիտեղելու համար մեր կողմէն կատարուած յաւելումներն առնուած են փակագծի մէջ եւ ընդգծուած: Բայց Թալէաթ կեղծելով փաստերը՝ դաշնագրի մը առաջարկը կը մերկայացնէ շրջուած ձեւով: «Այս միջոցին», կը գրէ ամիկա իր

յուշերում մէջ, «վարչապետ Սայիտ Հալիւ փաշա օր մը դեսպան վանկեհայմի Թուրքիոյ հետ համահաւասար պայմաններով Գերմանիոյ դաշնագիր մը կնքել փափակիւն իրեն հաղորդած ըլլալը մեզի գիտցնելու համար իր մօտ կանչեց Էն-վեր փաշան, հալիւ պէյը եւ զիս: Մեր կարծիքը հարցոց: Բուրսա ալ այն կարծիքէն էինք, թէ իր ներկայ կացութիւնը պահել կարենալու համար անհրաժեշտ էր Թուրքիոյ համաձայնութիւն մը կնքելը երոպական այսպիսի պետութեան մը հետ: Եւ Թուրքիա իր գոյութիւնն ու զարգացումը կրնար ապահովել միայն գիտութեան, մարտաբարութեան եւ անուտորի մէջ այս աստիճան զարգացած պետութեան մը օժանդակութեամբ: Վարչապետը յայտնեց խորհրդակցութիւնները յառաջ տանիլ ուզելը եւ խնդրեց, որ այս հարցը գաղտնի պահուէր: Տակաւին պաշտօնական եւ յստակ առաջարկ մը չըլլալուն՝ մեր միւս ընկերներում ոչ մէկ բան ըսուիլը գիտցոց: Այս առաջարկին պատերազմի մը վտանգէն յառաջացած ըլլալն ամփոջացէս հասկցանք: Պետութեան մը համար տկար Թուրքիան իրեն դաշնակից ունենալ փափակելուն համար այս աստիճան կարելոր պատճառի մը առկայութիւնը բնական կը գտնէինք: Բայց մեր մտածումը ընդհանուր պատերազմի մը չըսկսելուն եւ, անգամ մը այս համաձայնութեան մտնելէն ետք, մեր ալ պետութիւնը ամէն ձեւի վտանգէ գերծ կացուցանելուն վրան կը կեդրոնանար»: Տես՝ *Talât Pasanın Hâtıraları* (Istanbul, 1958), ss. 20-21: Հարցին գաղտնի պահուելուն մասին տես նաեւ Djemal Pasha, *Memories of a Turkish Statesman: 1913-1919* (London, 1922), pp. 108-109:

2. Kautsky, p. 109.

3. Նոյն, էջ 130-131:

4. Նոյն, էջ 178: Սակայն, ըստ ձեւալի, նոյն թուականին, Յուլիսի 23-ին Լեվեհտ Չիֆթլիֆի մէջ կայացող զօրահանդէսի ընթացքին՝ գերման դեսպան Ֆոն վանկեհայմը ըսած էր իրեն մօտենալով. «ձեւում՝ փաշա, միայն տեսէք, թէ գերման զինուորականներու միջոցով ի՞նչ արդիւնք է ձեռք ձգուած կարճ ժամանակի մը մէջ: Այժմ դուք ունիք թրքական բանակ մը, որ կրնայ բազմաստութեան դրուիլ աշխարհի լաւագոյն կերպով կազմակերպուած բանակին հետ: ... Մենք կրնանք ըսել, թէ մեծ յաղթանակ մը շահած պիտի ըլլայինք, մենք մեզ կոչելով դաշնակիցը պետութեան մը, որ այսպիսի բանակ մը ունի իր տրամադրութեան ներքեւ»: Տես՝ Djemal Pasha, p. 108:

5. Նոյն, էջ 174:

6. Նոյն, էջ 175:

7. Նոյն, էջ 156-158:

8. Նոյն, էջ 242:

9. Կակմարկէ Գերմանիոյ Ուիլհելմ Սրկրորդ կայսեր:

10. Լիւման Ֆոն Սամտըրզի գլխաւորած պատուիրակութիւնը, որ Պոլիս հասաւ 1913 թ.-ին. 1914 թ.-ի Օգոստոսին արդէն իսկ ստացեր էր եօթամասուն հազիւնց պատկանելի խումբի մը կերպարանքը, որ շատ շուտով պիտի փորձէր ձեռք անցընել զինուորական զեկավարութիւնը Թուրքիոյ մէջ եւ ճակատագրական դեր

խաղալ ռուս-քրքական բախումներու մէջ: Մամբամամուքիմներու համար տես՝ Otto Liman von Sanders, *Five Years in Turkey* (Annapolis, 1927), pp. 1-27:

11. Պերլինի բուրք դեսպանը:

12. Kautsky, p. 265.

13. Kiazim Karabekir, *Cihan Harbine Neden Girdik, Nasil Girdik, Nasil Idare Ettik?* kitab 1 (Istanbul 1937), ss. 25-26.

14. Քայզերին մերկայացուած պատճէմին վրայ յօգուած երեքը կ'ըսէր. «Գերման Ձիմուրական Պատուիրակութիւնը պիտի ստանձնէ քրքական բանակին վերին հրամանատարութիւնը պատերազմի ամբողջ տեւողութեան»։ Իսկ Պերման Հովկել մոյն պատճէմի լուսանցքին վրայ տեւցուցած էր, քէ դժուար քէ բուրքերն ընդունէին երրորդ յօգուածին բովանդակութիւնը, որ այդքան յստակ էր դրուած: Նոյնհետայն գերման արտաքին գործերու նախարարութեան պետական ֆարաուզար Ձիմմերմանը վերափոխեց զայն ու վերածեց յօգուած երեքի բովանդակութեան, տես՝ Kautsky, p. 286:

15. Նայն:

16. Նայն, էջ 368:

17. Նայն, էջ 355-356:

18. Նայն, էջ 355:

19. Նայն, էջ 416:

20. Նայն, էջ 412-413:

21. Նայն, էջ 436:

22. Ulrich Trumper, *Germany and the Ottoman Empire, 1914-1918* (Princeton, New Jersey, 1968), p. 23.

23. Kautsky, pp. 529-530.

24. Ե. Ղ. Սարգսեան, *Թուրքիան եւ Նրա Նուաճողական Քաղաքական-Նութիւնը Անդրկովկասում*, 1914-1918 (Երևան, 1964), էջ 149-150:

25. Հայկազն Գ. Ղազարեան, *Ցեղասպան Թուրքը* (Պէրնուք, 1968), էջ

23-24:

26. Kiazim Karabekir, *Gihan...*, kitab 1, (Istanbul, 1938), ss. 69-71.

27. Սարգսեան կը քարգումանէ. «Պայմանաւորուող կողմերը Աւստրո-Հունգարիայի եւ Սերպիայի միջեւ գոյութիւն ունեցող կոնֆլիկտում չէզոքութիւն կը պահպանեն»։ տես՝ Սարգսեան, էջ 149: Ղազարեան կը քարգումանէ. «Երկու պայմանագիր պետութիւնները յամձն կ'առնեն բացարձակ չէզոքութիւն պահել աւստրո-հունգար եւ Սերպիոյ վէճին մէջ»։ տես՝ Ղազարեան, էջ 23: Իսկ Գաուցքի կու տայ. «Պայմանագիր երկու կողմերը կը համաձայնին բացարձակ չէզոքութիւն պահել Աւստրո-Հունգարիոյ եւ Սերպիոյ մերկայ բախումին համար»։ տես՝ Kautsky, p. 529:

28. Սարգսեան կը քարգումանէ. «Այն դէպքում, եթէ Ռուսաստանը միջամտի կոնֆլիկտին իսկապէս ռազմական միջամտութիւնները օգնութեամբ եւ, այդպիսով, Գերմանիայի համար ամերածեշտ դարձնի իր պարտքն ու պարտականութիւնները կատարումը իր դաշնակցի՝ Աւստրո-Հունգարիայի նկատմամբ,

սպա այդ պարտքն ու պարտականութիւնները ենթակայ են կատարուելու մեր թուրքիայի կողմից»։ տես՝ Սարգսեան, էջ 149: Ղազարեան կը քարգումնէ. «Այն պարագային, երբ Ռուսիա կը միջամտէ զինուորական գործոն միջոցներով եւ Գերմանիա կը ստիպուի պաշտպանել Աւստրո-Հունգարիան, *Քասուս Ֆէտեհի*ի պայմանով, այսինքն եթէ յարձակում կրէ, մոյմ այդ պայմանները հասարակ է գորու պիտի ըլլան թուրքիայ նկատմամբ այ»։ տես՝ Ղազարեան, էջ 23: Իսկ Քաուցֆի կու տայ. «Այն պարագային երբ Ռուսիա զինուորական գործոն միջոցներով միջամտէ եւ այսպէսով Գերմանիայ պարտադրէ Աւստրո-Հունգարիայ հանդէպ եղած *Քասուս Ֆէտեհի*ը՝ այդ *Քասուս Ֆէտեհի*ը գոյութիւն պիտի ունենայ թուրքիայ համար այ»։ տես՝ Kautsky, p. 529:

29. Սարգսեան կը քարգումնէ. «Պատերազմի զէպֆում գերմանական ռազմական միսիան կը մնայ օսմանեան կառավարութեան տրամադրութեան տակ: Օսմանեան կառավարութիւնը կ'ապահովէ այդ միսիայի դրական ազդեցութիւնն ու իրական իշխանութիւնը քուրքական բանակի ընդհանուր գործողութիւնների վրայ»։ տես՝ Սարգսեան, էջ 149: Ղազարեան կը քարգումնէ. «Պատերազմի պարագային, գերման զինուորական յանձնախումբը պիտի մնայ թուրքիայ տրամադրութեան տակ: Թուրքիա կ'երաշխտուրէ, որ այդ *զինուորական յանձնախումբը զօրուր ազդեցութիւն պիտի ունենայ թրքական բանակի ընդհանուր ղեկավարութեան գործին մէջ*, համաձայն պատերազմական մախարաքի եւ գերման զինուորական յանձնախումբի պետին միջեւ եղած համաձայնագրիին»։ տես՝ Ղազարեան, էջ 23 (Ընդգծումը Ղազարեանինն է): Իսը Քաուցֆի կու տայ. «Պատերազմի պարագային՝ Գերմանիա իր զինուորական պատուիրակութիւնը պիտի քողու թուրքիայ տրամադրութեան տակ:

«Երբ ինք, իր կողմէ, կ'ապահովէ յիշեալ զինուորական պատուիրակութեան գործոն ազդեցութիւն մը բանակի ընդհանուր ղեկավարումին մէջ՝ Նորին վսեմութիւն պատերազմական մախարաքին եւ Նորին վսեմութիւն զինուորական պատուիրակութեան պետին միջեւ կայացած ուղղակի համաձայնութեան համաձայն»։ տես՝ Kautsky, p. 529:

30. Սարգսեան կը քարգումնէ. «Եթէ օսմանեան տերիտորիաները սպառնալիքի ենթարկուեն Ռուսաստանի կողմից՝ Գերմանիան կը պաշտպանի թուրքիային, հարկ եղած զէպֆում՝ զենքի ուժով»։ տես՝ Սարգսեան, էջ 150: Ղազարեան կը քարգումնէ. «Գերմանիա յանձն կ'առնէ զենքով պաշտպանել օսմանեան հողամասերը այն պարագային, երբ սպառնալիքի տակ կը գտնուին»։ տես՝ Ղազարեան, էջ 23: Իսկ Քաուցֆի կու տայ. «Գերմանիա յանձն կ'առնէ, զենքի ուժով՝ եթէ պէտք ըլլայ, ... (*ծածկազէրը պակասուր*) օսմանեան հողամասերը, եթէ սպառնալիքի ենթարկուին»։ տես՝ Kautsky, p. 529:

31. Սարգսեան կը քարգումնէ. «Եթեալ համաձայնագրերը, որը կնքուած է երկու պետութիւններին պաշտպանելու միջոցային այն բարդութիւններից, որոնք կարող են առաջ գալ մերկայ կոնֆլիկտից, ուժի մէջ կը մտնի նրա ստորագրման օրից եւ ուժի մէջ կը լինի մինչեւ 1918 թուականի Գեկտեմբեր 31-ը»:

տես՝ Սարգսեան, էջ 150: Ղազարեան կը քարգւտանէ. «Այս համաձայնագիրը կմտնուած է երկու կայսրութեանց (Ռուսիոյ) միջազգային դժուարութիւններու պարագային զիբար երաշխարեւում համար եւ ի գորու պիտի ըլլայ ստորագրուած թուականէն սկսեալ, եւ այս փոխադարձ պարտականութիւնները պիտի տեսնուին մինչեւ Գեղտեմբերի 31, 1918»: տես՝ Ղազարեան, էջ 23-24: Իսկ Բաուցքի կուտայ. «Այս դաշնագիրը, որ ստորագրուած է պաշտպանելու նպատակով երկու կայսրութիւնները ընդդէմ միջազգային բարդութիւններու, որոնք կրնան ծագիլ ներկայ բախումէն, ի գորու կը դառնայ անմիջապէս որ ստորագրուի վերայիշեալ լիազօրներու երկկողմանի այլ համաձայնութիւններու հետ, մինչեւ 31 Գեղտեմբեր 1918»: տես՝ Kautsky, p. 529:

32. Սարգսեան կը քարգւտանէ. «Եթէ պայմանաւորուող երկու կողմերից ոչ մէկը նրանից չհրաժարուի ժամկէտը լրանալուց վեց ամիս առաջ, ապա ներկայ համաձայնագիրը առաջուայ պէս հնթակայ է կատարման յաջող հինգ տարիներէ ընթացում»: տես՝ Սարգսեան, էջ 150: Ղազարեան կը քարգւտանէ. «Այն պարագային, երբ այդ թուականէն վեց ամիս առաջ որեւէ կողմ չէ ժըխտած շարունակութիւնը, այս զինակցութիւնը պիտի շարունակուի *Հինգ տարուան* համար եւս» (Ոնդգծումը Ղազարեանինն է): տես՝ Ղազարեան, էջ 24: Իսկ Բաուցքին կու տայ. «Այն պարագային, երբ դաշնադիր կողմերէն մէկը չէ հրաժարած վերայիշեալ ժամանակի աւարտէն վեց ամիս առաջ՝ այս դաշնագիրը ուժի մէջ պիտի մնայ հինգ տարուան տեւողութեան մը համար եւս»: տես՝ Kautsky, p. 529:

33. Սարգսեան չունի այս յօդուածը, սակայն իր մէջբերած վաւերագիրի աւարտին կու տայ ամոր բովանդակութիւնը, երբ կը գրէ. «Եթեբարդ յօդուածով նախատեսուում էր պայմանագիրը վաւերացնել նրա ստորագրումից յետոյ՝ մէկ ամսուայ ընթացում»: տես՝ Սարգսեան, էջ 150: Ղազարեան կը քարգւտանէ. «Ներկայ դաշնագիրը պիտի հաստատուի Գերմանիայ կայսեր եւ օսմանեան կայսեր կողմէ եւ վաւերացուած պատնէնները պիտի փոխանակուին մէկ ամսուան ընթացքին, ստորագրուած թուականէն սկսեալ»: տես՝ Ղազարեան, էջ 24: Իսկ Բաուցքի կու տայ. «Ներկայ վաւերագիրը պիտի վաւերացուի Նոբին վեհափառութիւն Գերման կայսրին, Բրուսիոյ քաղաքին եւ Նոբին վեհափառութիւն օսմանցիններու կայսրին կողմէ, եւ վաւերացումը պիտի փոխանակուի ստորագրութեանէն ետք մէկ ամսուան ընթացքին»: տես՝ Kautsky, p. 529:

34. Սարգսեան կը քարգւտանէ. «Ներկայ համաձայնագիրը կը մնայ գաղտնի եւ կարող է հրապարակուել պայմանաւորուող երկու կողմերի միջեւ գոյացած համաձայնութիւնից յետոյ միայն»: տես՝ Սարգսեան, էջ 150: Ղազարեան կը քարգւտանէ. «Այս զինակցութիւնը գաղտնի պիտի մնայ եւ պիտի չհրատարակուի, առանց երկու պայմանագիր պետութեանց համաձայնութեան»: տես՝ Ղազարեան, էջ 24: Իսկ Բաուցքի կու տայ. «Ներկայ այս դաշնագիրը կը մնայ գաղտնի եւ կրնայ հանրութեան սեփականութիւնը դառնալ միայն որպէս արդիւնք երկու կողմերու միջեւ կայացած համաձայնութեան մը»: տես՝ Kautsky, p. 529:

35. Նոյն, էջ 530:
36. Նոյն, էջ 526: Թուրք-գերմանական դաշնագրի ստորագրութենէն ետք՝ մոյնաման դաշնագիր մըն ալ ստորագրուեցաւ Աստրո-Հունգարական կայսրութեան հետ. առ այդ՝ Թալէաք կը գրէ իր յուշերուն մէջ թէ, «վերջապէս համաձայնութիւնը յստակ ձեւ մը ստացաւ եւ համաձայնագրին ստորագրուեցաւ վարչապետին եւ ֆոն վանկենհայմի կողմէ: Նոյնաման համաձայնութիւն մըն ալ Աստրիոյ դիւսպանին հետ կայացնելով՝ ստորագրուեցաւ»: Տես՝ Talât, s. 21: Տես նաեւ՝ Djemal Pasha, p. 109:
37. Trumpener, p. 109.
38. Kautsky, p. 552.
39. Լոնտոնեան մուշտիմարաններուն ապաքրուած քրքական ռուսագրութեան մը, որ երբեք ալ չյանձնուեցաւ բուրժուարութեան. տես՝ Trumpener, p. 24. տես նաեւ՝ Yusuf Hikmet Bayur, *Türk İnkilabi Tarihi*, cilt III (1) (Ankara, 1957) ss. 62-69 ve 99:
40. Kautsky, pp. 562-563. Գերմանիոյ կողմէն պատերազմի ընդդիմութեան եւ մտնելու մասին տես՝ Talât, ss. 21-22 ve 24-28: Այս հարցին շուրջ տես նաեւ Djemal Pasha, pp. 115-116:
41. Նոյն, էջ 541: 1908 թ. էն ի վեր Պերլինի գլխաւոր մտահոգութիւններէն մէկն էր եղած ցնցումը իսլամական աշխարհին, եւ անոր հետ՝ նաեւ կողակաւին. այս մտահոգութիւնը ծրագրի վերածուեցաւ միայն 1914 թ. ի Սեպտեմբերին. տես՝ Trumpener, p. 22.
42. Kautsky, p. 581.
43. Ռուս-քրքական այս բանակցութիւններուն մասին տես՝ Սարգսեան, էջ 154-161, Harry Howard, *The Partition of Turkey: A Diplomatic History, 1913-1923* (Norman, Okla., 1931), pp. 96-102, Luigi Albertini, *The Origins of the War of 1914*, vol. III (London, 1957), pp. 618-620, Jay Smith Jr., *The Russian Struggle for Power, 1914-1917* (New York, 1965), pp. 96-76.
44. Trumpener, p. 28.
45. Կակմարկուի 1912-1913 թթ. Թուրք-Պալմանեան Պատերազմին:
46. Karabekir, kitab 1, ss. 71-72.
47. Սարգսեան, էջ 156:
48. Ալեքսանդր Խատիսեան, *Հայաստանի Հանրապետութեան Մազումն* ու *Չարգացումը*, (Աթէնք, 1930), էջ 60:
49. Trumpener, p. 36.
50. Այս անչուքեամբ ձեւալ փաշա կը գրէ իր յուշերուն մէջ. «Այս միջոցին տեղի կ'ունենային պայրամի տօնակատարութիւնները, ուստի ամէն օր կը հանդիպէինք Մեծ վեզիրի պալատին մէջ: Սայիտ Հալիմ փաշան յայտարարեց, թէ անմիջապէս պիտի հրաժարէր, եթէ այս յարձակումը պատերազմ մշանակէր: Անմիջապէս ցոյց տուինք իրեն, թէ Գերմանիոյ հետ ի՛ր իսկ դաշնագիր մը ստորագրելէն ետք, եւ միայն քանի մը օր առաջ ինքզինք կապելով այն որոշումներուն, որոնք այդ դաշնագիրով կը մանչնային քրքական բոլոր յանձնառութիւն-

ներքը, կրնար ո՛չ իսկ մէկ վայրկեան հրաժարիլ դէպքի մը պատճառով, որ բնական արդիւնքէ մը տարբեր բան չէր: Այսպիսի ամօթստի տրամաբանութեամբ, որում դէմ չէր կրնար որեւէ արժէք մերկայացնող պատճառարանութիւն գտնել Մեծ վեզիրը ընդունեցաւ իրերու դրութիւնը եւ հրաժարեցաւ հրաժարելու գաղափարէն»: Տես՝ Djemel, p. 113: Թրքական դահլիճի տագնապին մասին տես նաեւ՝ Talât, ss. 26-27: Օգոստոսի 30-ի իր թիւ 645 հեռագիրով վանկեհայքի կը հաղորդէր իր կառավարութեան, թէ դահլիճէն մերս գոյութիւն ունեցող անհամաձայնութեան պատճառով շրջան ընելու սկսեք էր գրոյց մը մօտ օրէն կատարուելիք պետական բռնահարուածի մը մասին, որպէսզի ինձեք կարեմաբ ձեռք անցնել վերին իշխանութիւնը. տես՝ Trumpener, p. 45. իսկ 1914 թ. ի Սեպտեմբերին, ինչպէս կը վկայէ Քրֆաւեր գերման թղթակից ձախը, Պերլինի Քրֆակամ դեսպան Մուխթար փաշան Ռիլիելի մտքասին առաջարկեց անհամաձայն Մեծ վեզիրը եւ կարգ մը այլ հակապատերազմաւոր նախարարներ, առաջարկ մը, որ, սակայն, մերժուեցաւ գերման իշխանութիւններու կողմէ. տես՝ Ernest Jackh, **The Rising Crescent: Turkey Yesterday, Today and Tomorrow (New York, 1944), pp. 114-116.**

51. Ղազարեան կու տայ 9 Հոկտեմբերի 1914 թուականը, մինչ ըստ Թրուսթներին՝ թուականն է 11 Հոկտեմբերի:

52. Ղազարեանի մօտ զինուորական այս ծրագրիին առաջին եւ երկրորդ կէտերը միացած են եւ կը մերկայացնեն հետեւեալ պատկերը. «Նաւատորմիդը առանց պատերազմ յայտարարելու պիտի յարձակի ռուսական նաւատորմին վերայ, Սեւ ծովի շրջանին մէջ գերակայութիւն ձեռք բերելու համար: Յարձակման վայրկեանը թողուած է ծովակալ Զուլտանի դատողութեան: Ռուսիոյ դէմ պատերազմի յաջող սկզբնաւորութեանէն ետք, Նորին վեհափառութիւն Սուլթանը Սուրբ Պատերազմ (ձիհաստ) պիտի յայտարարէ Թուրքիոյ, Գերմանիոյ եւ Աւստրիոյ թշնամիներուն դէմ». տես՝ Ղազարեան, էջ 25:

53. Ղազարեան կը թարգմանէ. «Թուրք բանակը, որ Հայաստանի մէջ կը գտնուի, ամուր կերպով պիտի զարմէ Անդրկովկաս գտնուող ռուսական ուժերուն». տես՝ նոյն:

54. Ղազարեան կը թարգմանէ. «Տրդ բանակը, ի հարկին՝ 12րդ բանակին հետ, Նգիպտոս պիտի երթայ, թէեւ վեց շաբաթէն առաջ սահմանագլուխ չի կրնար հասնիլ». տես՝ նոյն:

55. Ղազարեան կը թարգմանէ. «Երբ Պուլկարիոյ հետ համաձայնութիւն գոյանայ, թուրք ուժերը Պուլկարիոյ հետ Սերպիոյ վրայ պիտի յարձակին: Այս շարժումին նպատակներէն մին ալ է ազդել Ռուսմանիոյ եւ Յունաստանի վրայ». տես՝ նոյն:

56. Ղազարեան կը թարգմանէ. «Եթէ Ռուսմանիա մեզի հետ ըլլայ, Քրքրֆակամ գլխաւոր ուժերը, Ռուսմանիոյ բանակին հետ, պիտի արշաւեն Ռուսիա». տես՝ նոյն:

57. Ղազարեան կը քարգմանէ պակասաւոր կերպով. «Պատրաստութիւններ կ'ըլլան 3էն 4 բանակներ Օտեսա ցամաք համելու, ծովային գերակայութիւնը ապահովելու... (ծածկազիր թիւեր). զինուորական ժամկէտը կայտւում ունի... գերման եւ աւստրիական յարձակման յառաջացումէն». տես՝ նոյն:

58. Ղազարեան կը քարգմանէ. «Կը խնդրեմ որ պալաման հրկիւրները սիւսուրիս Գերմանիոյ, Աւստրիոյ, եւ Թուրքիոյ, ամենքն որ դեռ միացած չեն: Գերմանիա ամէն միջոց գործածելով պէտք է (որ) փութացնէ ատիկա: Մինչ այդ, քրքական զինուորական ոյժերը կը սպասեն Թրակիոյ մէջ, Մարմարայի եզերքները եւ 10րդ բանակը կը մնայ Սամսոնի մտերը:

«Այն պարագային, երբ պալաման պետութիւնները քշմամական դիրք բռնեն, զարմել Պուլկարիոյ». տես՝ նոյն:

59. Ղազարեան կը քարգմանէ. «Թրքական բանակի պատերազմական գործողութիւններուն եւ ոյժերուն մասին այստեղի գերման զինուորական կը-ցորդը ամէն տեղեկութիւն արդէն ստացած է:

«Մեր այս նպատակներուն Ձեր համաձայնութիւնը իմացնել». տես նոյն, էջ 25-26:

60. Karabekir, kitab 2, ss. 435-436.

61. Kautsky, p. 541.

62. Նոյն, էջ 548:

63. Trumpener, p. 54. տես նաեւ՝ Ղազարեան, էջ 26:

64. Զ. Ս. Կիրակոսեան, *Առաջին Համաշխարհային Պատերազմը եւ Արեւմտահայութիւնը 1914-1916 թթ.* (Երեւան, 1967), էջ 413: Այս մասին տես նաեւ՝ Մեվլանգաւտ Բիֆաթ, *Օսմանեան Կայսրութեան Մութ Մալքերը* (Պէ-րուք, 1938), էջ 27 եւ 52-54:

65. Trumpener, p. 283.

66. T. Yilmaz Oztuna, *Turkiye Tarihi*, cilt 12 (Istanbul, 1967), ss. 243-244.

**THE TURCO-GERMAN MILITARY TREATY
OF AUGUST 2, 1914
AND
THE ARMENIAN MASSACRES OF 1915**

LEVON VARTAN

The paper is a rather chronological study on the Turco-German relations prior to the signing of the Turco-German Military Treaty of August 2, 1914; however, it also deals with the

post-treaty period and brings to light the secret diplomatic negotiations which at last culminated in the Turco-Russian contention on the Caucasian Front.

Besides shedding light on one of the most intriguing phase of the First World War, the paper tries to open up the secret rapport between the military and Pan-Turanian designs of the Young-Turk Party of the Ottoman Empire and the Armenian Massacres of 1915 perpetrated later by the self-name party.

Relying on German and Turkish documents, the writer endeavors to find the backing and hence the silent endorsement of the German authorities in promoting the Armenian Massacres of 1915.